


8782

947.925
L-61



8282

9(47-925)

4-61

sm

ՍՏ. ԼԻՍԻՑԵՆ

05 SEP 2

31 AUG 2007



ՀԱՅՐԵՆԻ ԱՌԱՄՊԵԼՆԵՐԻՑ ԵՒ ՎԷՊԵՐԻՅ

ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՅ

1001
1863

չ

(Ծխական դպրոցների Գ. բաժանմունքի նիւթ)



ԹԻՖԼԻՍ

Թիֆլիս, տպարան „Հերմէս“ Ս. Պ. Եղիզարեանի, Մաղաթեան փ. 5.
1907

10:3 MAY 2013

01 MAY 2013

08.10.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԴՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԴՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Խմ այս պատմածները կուգենայի հիմնովին վերա-
մշակված արձագանք «ՀԱՍԿԵՐ» ամսագրից, բայց այս
սարի անկարող եղայ այդ անել, ու սիայն հետեւելով
ուսուցիչներից շատերի առաջարկին՝ արձագանքում գրեթէ
անփոփոխ:

Յաջորդ հրատարակութեան համար կաշխատեմ վե-
րամշակել ամբողջ նիւթը եւ յարմարեցնել դպրոցական
դասաւանդման, չափով նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒ-
ՂԵՑՈՅՑ ուսուցիչների համար:



Գ Ո Ւ Ս Ս. Ն

Նաւասարդի տօնն է. նոր տարի է: Մըջիւնների
պէս վիտուտ ենուխտաւորները Բագրեանդ զաւառի Բագա-
ւանում և ջերմ երախտագիտութեամբ փառաբանում են
Վանատուր աստծուն: Նրանք հաւաքել են հեռու տեղե-
րից, որ նւիրական մեհեանում (հեթանոսական տաճարում)
սրտաբուլիս զոհերով պատեն Ամենաբեր աստծուն, որը
առատ հունձ է պարգևել արտերին և լիութիւն է տւել
այգիներին:

Ծաղիկներով և նորահաս պտուղներով զարդարած է
կուռքի սեղանը. երկարագգեստ բուրմերը (հեթանոս քա-
հանաները) անուշահոտ խունկ են ծխում, զոհեր են մա-
տուցանում և ջրհեղեղի յիշատակին ջուր են սրսկում ժո-
ղովրդի վրա ու աղանւններ թոցնում: Ամբոխը հեռւում է
նրանց օրինակին: Էլ մարդ չը մնաց չը թրջւած. հազարա-
ւոր ձեռներից վեր են սլանում փռուալով անհամար աղաւ-
նիններ, սպիտակ թաշկինակների պէս պտտում են վե-
րում և երամակներ կազմում: Նրանց հետ վեր են համ-
բառնում ժողովրդի աղօթքները, որ աստուածութիւնը
բարով նորոգի այս տարին և լինի բարի «ամանոր»:

Թանձր ծուխ է կանգնած օդի մէջ այրւող զոհերից
և մառախուղի պէս փռում է գետնին: Փողը փչում է
այս ու այն տեղ և թմբուկը թնդում է հարւածներից: Զի-
երի խրխնջոցը միախառնւում է մարդկանց երգերի և կան-
չերի հետ, ուրախութիւն և ցնծութիւն է ամեն սայլի մօտ,
ամեն վրանի տակ:

Հորիզոնի վրա, սպիտակափառ Մասիսի զագաթին, հա-
զարաւոր կայծերով պսպղում է ձիւնը աշնանամուտ արևի

Թեք ճառագայթներից: Դիմացը բազմած է լայնանիստ նը-
պատ լեռը, որի ստորոտից դուրս է վազում կայտառ Ա-
րածանին (կամ Հայկական Եփրատը, այժմ Մուրադ չայ):
Օձի պէս սողալով՝ գետակը քսւում է Բագաւանի եզեր-
քին և ուրուում փախչում է դէպի Տարօնի դաշտը, որ յե-
տոյ գրկի փրփրալից Մեծ Եփրատի հետ ու զնայ խառ-
նւի Պարսից ծոցի ալիքների հետ:

Նախարարներն էլ (ազնւական իշխանները). Թագա-
ւորն էլ իրենց ընտանիքներով եկել են տօնին: Մեհեանից
ոչ հեռու, բաց դաշտի մէջ, ձգւած է արքունի բանակը,
խոր խրամատով շրջապատւած, և մէջտեղում, լայն հրա-
պարակի վրա, երկար տարածութիւնով ուրիշ վրաններից
բաժանւած, առանձնացած կանգնած է արքայական գու-
նաւոր խորանը (վրանը)՝ իր բազմաթիւ բաժանմունքնե-
րով: Բանակի մուտքերի մօտ արթուն պահապանները վա-
հաններն իջեցրած՝ կրթնել են երկար նիզակներին և նա-
թանձով նայում են իրանց ազատ ընկերներին, որոնց պը-
ղնձէ սաղաւարտները պսպղում են այս ու այնտեղ ժո-
ղովրդի միջից: Նախարարների տղաները միասին հաւաք-
ւած խաղեր են սարքում աստծու պատւին և ցոյց են
տալիս իրենց ձեռքի և աչքի հմտութիւնը. նրանք նետեր
են արձակում, նիզակ են ձգում, արշաւանքի մէջ են մըր-
ցում: Ազնւատոհմ կանայք պար են բռնել և շլացնում են
իրենց դէմքի գեղեցկութիւնով, անթիւ զոհարներով և ճա-
կատի ոսկիներով, նրանք էլ երգում են Վանատուրի փառքը:

Շքեղ է Թագաւորի բանակը, աչք են կուրացնում նրա
զրօշակների թւատարած արծիւները. մեծ է նրա զօրու-
թիւնը և հարստութիւնը, բայց այդ բոլորին «ամենաբեր,
ամանոր Վանատուրն» է ամենքի սրտերին իշխում, նրա
փառքն է ամենքին հրապուրում: Այս և այնտեղ, ամբո-
խի մէջ լսւում է ոգևորւած «գուսանի» (երգչի, աշուղի)
բաղցը ձայնը, որ պատմում է աստծու արարքները շըր-
ջան կազմած հայրենակիցներին: «Բամբիւր» (նւագարան)
ձեռին նա զարկում է մետաղէ լարերին և խորհրդաւոր

ձայնով երգում է առասպելը ¹⁾ աշխարհի սկզբնաւորու-
թեան և առաջին մարդու, ջրհեղեղի և Քսիսութրի (Նո-
յի) մասին:

Նա պատմում է թէ ինչպէս զարհուրելի ջրհեղեղից
յետոյ, երբ արար աշխարհը կործանւել էր ու դարձել
կարծես մի անծայր ովկիանոս, մի սղոցածուկ եկաւ
առաջը կտրեց ու կանգնեցրեց տապանը Կորդւաց լեռների
Արարադ լգազաթին:

Պատմում է թէ ինչպէս Քսիսութրը ջրհեղեղից յե-
տոյ, զոհաբերութեան ժամանակ, կենդանի վերացաւ իր
կնոջ ու նաւապետի հետ աստուածների մօտ և յաւիտեան-
անմահ ապրում է Եփրատի (Արածանիի) և Տիգրիսի ա-
կունքների մօտ, անա այնտեղ, Մասիսի գագաթին:

Երգիչը պատմում է թէ ինչպէս Քսիսութրի որդիք
— Զրւան, Տիտան և Յապետութէ (Սեմ, Քամ և Յաբէթ)
բաժանեցին աշխարհը իրար մէջ, բայց Զրւանը զւգեց
ամենքի վրա բռնանալ, վերջն էլ Թագաւորեցնել իր որդո-
ցը: Բայց եղբայրները ընդդիմացան նրան, և սկսեց
նրանց մէջ մի սոսկալի կռիւ: Քոյրը, Աստղիկը, մէջ մը-
տաւ, դադարեցրեց աղմուկը և կրտսեր եղբայրներին հա-
մոզեց, որ աւագը, Զրւանը, Թագաւորի, միայն այն պայմա-
նով, որ նրա մահից յետոյ՝ զաւակներին չանցնի այդ Թագաւո-
րութիւնը: Այն ժամանակ Տիտանեաններից հզօր հսկաներ
դրին պահապան Զրւանի տանը, որ արու զաւակ ծնւի
թէ չէ՝ սպանեն: Այսպէս երկու մանուկ սպանեցին: Աստ-
ղիկը վերջապէս համոզեց Տիտանեաններից մի քանիսին,
և նրանք յօժարեցին կենդանի թողնել այնուհետեւ ծնւած-
ներին, միայն թէ տանեն հեռու արևմուտք դէն ձգեն:
Այն լեռը, որտեղ ձգում էին Զրւանի որդոց, կոչւեց
Դիւցընկէց ²⁾:

¹⁾ Առասպել—աստուածների և դիւցազնների մասին զրոյց
կամ պատմութիւն:

²⁾ Դի կամ դիք—աստուած: «Դիւցընկէց» — աստուածներին դէն
ձգելու տեղ:

Այսպէս էր երգում երգիչը և ունկնդիրները ուշադրութեամբ ահանջ էին դնում նրա խօսքերին, խրախուսում էին նրան բարձրաձայն կանչերով ու հետը պարում:

Միայն Նաւասարդի տօնին չէր, որ երգում էր գուսանը: Ամեն մեհենական տօնախմբութեան, ամեն խնջոյքի, թագաւորի պալատում թէ իշխանների ամրոցներում, որսից յետոյ՝ անտառում թէ դաշտում, ամեն զիւղական հարսանիքին, հնձից յետոյ, ձմեռայ երկար անգործ երեկոները — ամեն առիթով հնչում էր նրա քաղցրալուր բամբուռ: Ժողովուրդը առատ պարգեւատրում էր նրան, ու հաւատում թէ այդ շնորհքը տւել է նրան Վահագն աստուծոյ:

Նա երգում էր հրաշալի առասպելներ աստուծոյն եւ նրանց զաւակների մասին ու գեղեցիկ վէպեր հայրենի հերոսների մասին: Նա հպարտութեամբ փառաբանում էր Հայկի ազատասիրութիւնն և Արամի քաջութիւնը, գովում էր Արայի պարկեշտութիւնը և Արտաշէսի շինարարութիւնը, անէծք էր թափում վիշապների ծնունդ, նախանձուտ, նենգամիտ Արտաւազդի գլխին, ու վիպասանի խօսքերը խորը գրոշմում էին հայերի մտքերում ու որդեցորդի անցնում էին, երբեմն աւելի գեղեցկանալով, երբեմն էլ խառնաշփոթւելով: Այդ աւանդութիւններից էր միայն իմանում Հայաստանի զաւակը իր աստուծոյն, նահապետների և թագաւորների մասին, քանի որ դեռ գրել կարգալ չը գիտէր, մինչև քրիստոնեայ դառնալը:

Բայց յետոյ էլ, երբ քրիստոնէութեան հաստատուելովը շատերը գիր սովորեցին և սկսեցին մատենաների (գրքերի) մէջ նշանակել ազգի սե ու կարմիր օրերը, այդ ժամանակ էլ երգը չը լռեց: Հիմա էլ մեր երկրի այս ու այն անկիւնում աշուղը պատմում է անցած գնացած մեծագործութիւնները: Բայց շատ բան արդէն անդարձ մոռացւել է, շատ բան դարերի հետ փոփոխւել աղաւաղւել է:

Նս կը պատմեմ ձեզ այդ հայրենի առասպելներից և վէպերից մի քանիսը:



I

ՀԱՅԿ ԵՒ ԲԷԼ

Ահեղ և երևելի էին առաջին աստուծոյն. նրանք էին աշխարհի մեծամեծ բարիքների պատճառը, նրանք ստեղծեցին աշխարհն ու մարդուն: Նրանցից ծագեց յաղթանգամ, վիթխարի ու անհեթեթ հսկաների ցեղը, որոնց մէջ ծնւեց աշտարակաշինութեան ամբարիշտ, ամբարտաւան միտքը: Նա երբ նրանք զբաղւած էին աշտարակաշինութեամբ, մի ահագին հողմ բարձրացաւ աստուծոյն ցասումից, քանդեց, ցրիւ տւեց աշտարակը, և անլուր բառբառներ բաշխեց նրանցից ամեն մէկին: Ադմուկ և շփոթութիւն ընկաւ մէջները: Այդ հսկաներից մէկն էր և Յապետութեան ¹⁾ Հայկը, անւանի ու քաջ նահապետը, ամրակազմ ու հաստաբազուկ դիւցազնը, գանգուր մագերով և զւարթ աչքերով աղեղնաւորը: Նա ընդգիմացաւ ամենքին, որոնք կամենում էին ստրկացնել ուրիշ ազգերը և բռնի ուժով միապետ դառնալ դիւցազների մէջ: Նա աներկիւղ ձեռք բարձրացրեց և Տիտանեան Բէլի դէմ, որը արդէն շատերին էր իրեն հնազանդեցրել զօրութեամբ և խորամանկութեամբ:

Բայց բախտը աշողեց գոռոզ Բէլին, և նա տիրեց ամենքին: Բոլոր ազգերը կատարում էին նրա հրամանները, երկրպագում էին նրան և զոհ մատուցանում:

Միայն Թորգոմի որդին, ազատասէր Հայկն էր, որ չուզեց նրան ծառայել և Աստծու տեղ պաշտել: Նա չուարաւ գնաց Բաբելոնի կողմերից դէպի հիւսիս, դէպի Ա-

¹⁾ Յապետութիւն ցեղից:

ըրաւաւ երկիրը, իր հետ առնելով իր անդրանիկ որդի Արմենակին և ուրիշ որդոց, աղջիկներին և թոռներին, բոլորն էլ զօրաւոր մարդիկ, թւով մինչև երեք հարիւր հոգի: Նրա հետ, բացի ծառաներից, հեռացան և շատ օտարականներ, և այսպէս բոլորը միասին, իրենց ունեցած չունեցածով, հասան վերջապէս մի դաշտավայր տեղ, Կորդուաց լեռների ստորոտում (Վերին Տիգրիսի ափին): Այստեղ արդէն ապրում էին աւելի առաջ ցրւած մարդկանցից շատերը: Հայկը իրեն հնազանդեցրեց սրանց, շինեց այստեղ բնակութեան տուն և որդէցորդի ժառանգութիւն տւաւ այս կալածքը իր Կազմոս թոռանը, Արմենակի որդուն, իսկ ինքը տնով տեղով քաշւեց աւելի հեռու, գնալով միշտ հիւսիս-արեւմուտք: Վերջապէս նա կանգնեց մի լեռնադաշտում, որ ձգւում է Արածանի գետի և Վանայ ծովի մէջտեղ, այստեղ հաստատեց բնակութեան տեղ իր ցեղի համար: Գաւառը նա կոչեց Հաւք (հայրեր), այսինքն թէ՛ այստեղ բնակւողները Թորգոմեան (հայկական) ազգի նախահայրերն են: Հաքքում նա շինեց մի գիւղ և իր անունով անւանեց Հայկաճէն:


Լեռնադաշտակի մօտ, մի լայնանիստ լեռան ստորոտում, նոյնպէս բնակւում էին առաջուց բաժանւած մարդիկ Զրւանի (Սեմի) ցեղից. սրանք իրենց կամքով ճանաչեցին Հայկին իրենց տէր և այսպիսով մեծացրին նրա ցեղը:

Բայց չէր կշտանում բռնակալ Բէլի փառասիրութիւնը: Նա ուղարկում է իր որդիներից մէկին Հայկի մօտ հաւատարիմ մարդկանց հետ և պատւիրում է ասել նրան այսպէս.


— Բնակեցիր այդ սառնամանիքի ու ցրտի մէջ և սառուց ես դարձրել միտքդ ու հոգիդ: Տաքացրո՛ւ, մեղմացրո՛ւ հպարտ բարբիդ ցրտութիւնը, հնազանդւիր ինձ և հանդարտ ապրիր որտեղ կամենաս իմ տաք երկրում:

Բայց Հայկը խիստ ու խրոխտ պատասխանով ետ դարձրեց Բէլի պատգամաւորներին:

Կատաղեց Բէլը և մտածեց՝ ինչ էլ որ լինի բռնի Հայկին և սպանի: Իր անթիւ անհամար ազգերից նա ժողովեց մի ահագին բազմութիւն հետևակ զօրքերի և շտա-



պեց դէպի Արարատի երկիրը, Կորդուաց լեռները, որոնց ստորոտում բնակւում էր Կազմոսը: Տեսնելով նրա զօր-



քերի շատութիւնը, Կադմոսը փախաւ՝ առջեւից սուրհանգակ ուղարկելով Հայկին նախազգուշացնելու։

— Իմացիր, ով մեծդ գիւցազների մէջ, որ Բէլը գալիս է քեզ վրա անմահ քաջերով և երկարահասակ հրականերով։ Նա արդէն հասել է իմ տան հողերին, և ես ինքս կնոջս և զաւակներին հետ փախստական ահա գալիս եմ քեզ մօտ։ Շտապիր, մտածիր, ինչ որ անելու ես, արա։

«Ուշիմ, խոհեմ, քաջագանգուր և խայտակն» Հայկը իսկոյն ժողովեց իր բոլոր որդիներին և թոռներին, քաջ և աղեղնաւոր հսկաներին, նոյնպէս և ծառաներին և առհասարակ իր ձեռքի տակ եղածներին, և անվեհեր ընդառաջ գնաց, թէև թւով իրենք քչւոր էին։ Երբ նրանք հասան Աղի ծովի ափին, Հայկը կանգնեցրեց իր սակաւաթիւ զօրքը և ասաւ։

— Ո՛վ ազատասէր Թորգոմեաններ, ձեզնից ով կուզէ ստրուկ թաւալել գոռոգամիտ Բէլի ոտների տակ։ Յարձակւենք հէնց այնտեղ, ուր կանգնած կը լինի բռնակալը իր քաջերի բազմութեան մէջ։ Թող կամ փառքով ամենքս մեռնենք ու չը տեսնենք մեր աչքերով, ինչպէս Բէլը ծառայ կը տանի մեր գերդաստանը, կամ ցոյց տանք նրան մեր մատների աջողութիւնը, ցրւենք նրա խառնիճադանձ ստրուկ ամբոխը և ապրենք իբրեւ յաղթողներ։

Այսպէս խօսեց Հայկը և առաջ տարաւ իր կտրիճներին այլ ևս մէկ առաքարէզ, մինչև որ հասաւ մի դաշտաձև հովիտ բարձր լեռների մէջ։ Բարձրավանդակի միջով վազում էր մի գետակ։ Նոր էր Հայկը ամրացել աջ ափին, որ նրա մարդիկ, երեսները վեր բարձրացնելով, տեսան զիմացի լեռան լանջով իջնում է թշնամին։ Կարծես մի հեղեղ, յանդուգն յորձանքով ցիր ու ցան վայր էր սահում Բէլի անկարգ զօրութիւնը, իսկ ինքը Բէլը, յոյսը դրած իր զօրավարների քաջութեան և ոյժի վրա, անհամբերութիւնից առաջ էր ընկել։ Նա կանգնած էր արդէն գե-

տակի ձախ ափին մի բլրակի վրա և, մի քանի ընտիր հսկաներով շրջապատւած, իբրեւ մի դիտանոցից դիտում էր գոռոգ և հպարտ, և մեծ տարածութիւն էր նրա ու ետ մնացած ամբոխի մէջ։ Իսկոյն ձանաչեց Հայկը նրա զինավառ խումբը և իրեն՝ բռնակալին։ Բէլը հագած ունէր երկաթէ գլխանոց պսպլուն ծայրերով, լանջին և թիկունքին՝ պղնձէ տախտակներ, ոտների բարձերին և բազուկներին՝ պահպանակներ, մէջքին կապած էր դօտի և ձախ կողքից կախած էր երկսայրի սուրը, աջ ձեռքին էր ամուր նիզակ, իսկ ձախ ձեռքին՝ վահան, և ընտիր-ընտիր տղամարդիկ կանգնած էին աջ և ձախ կողմում։ Այս որ տեսաւ Հայկը, շտապեց կարգի դնել իր սակաւաթիւ զօրքը։ Նա Արմենակին երկու եղբայրներով կանգնեցրեց աջ, իսկ Կադմոսին ուրիշ երկու որդիների հետ ձախ կողմից, ինքն էլ անցաւ ամենքի գլուխը, իսկ մնացածներին շարեց ետև։ Այսպէս եռանկիւնի ձևով կազմեց իր գունդը և հանդարտ դիմեց առաջ։

Կանգ առաւ մի փոքր Հայկը և հեռւից կանչեց Բէլին։

— Ի՞նչ ես ընկել ետևիցս և այստեղ եկել։ Դարձիր, դնա՛ քո տեղը, եթէ ոչ՝ կը մեռնես դու այսօր իմ ձեռքից։ Մի՞թէ մոռացել ես որ իմ նետը երբէք չէ վրիպում։ Պատասխանեց Բէլն և ասաւ։


— Եթէ չես ուզում ընկնել իմ մանուկ գինակրիս ձեռքը և մեռնել նրա սրից, եկ քո կամքով մտիր իմ իշխանութեան տակ և կացիր խաղաղութեամբ իմ տան մէջ։ Ես կը շինեմ քեզ վարիչ իմ որսորդ տղաների և որսի շների։

Ձը համբերեց Հայկը և սկսեց հայհոյել։

— Շուն ես դու և շների երամակիցն էք դու և քո ժողովուրդը։ Այս է գալիս եմ, որ դատարկեմ քեզ վրա իմ կապարձը։

Եւ իրար խառնեցին երկու կողմերի հսկաները։ ահազին դրդիւն բարձրացաւ երկրի վրա նրանց ընդհարումից և ահ ու սարսափ էին ձգում նրանք միմեանց

սրտերի մէջ իրենց յարձակումներով: Քիչ հսկաներ չը կործանեցին և գետին տապալեցին այստեղ դիպչելով սրի բերանին, և ոչ մէկի, ոչ միւսի կողմը չէր յաղթում: Տարակուսեց և զարհուրեց Բէլը այս անսպասելի դիպածից և սկսեց ետուետ քաշել, բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր: Նա մտադիր էր ամբանալ այնտեղ իր ընտիր գնդի հետ, մինչև որ հասնէր մնացած զօրութիւնը, և այնուհետև միւս անգամ նորոգել կռիւը:



Ռոսի-վերակացուն րաց է րսդեում ռնիւր երամակը

Հայկը իսկոյն հասկացաւ նրա միտքը. նա առաջ նետուեց, մօտ հասաւ ազգերի հրամանատարին, լի քաշեց իր լայնալիճ ամուր աղեղը և դիպցրեց երեքթեան նետը հէնց նրա կրծքին: Ծակեց նետը կրծքի պղնձէ տախտակը, գուրս եկաւ շեշտակի թիկունքի մէջտեղից և խորը ցցւեց դետնի մէջ: Երկրին զարկւեց պարծենկոտ Տիտանեանը և շունչը փչեց, իսկ նրա գունդն ու ամբօխը՝ տեսնելով

քաջութեան այս ահագին գործը, սարսափահաբ փախան դէս ու դէն: Հայկի մարդիկ ընկան ետեից և խլեցին նրանց ձեռքից անթիւ ձիեր, ջորիներ և ուղտեր—ամբողջ երամակներ:

Իր յաղթութեան յիշատակին Հայկը շինեց կռիւ դաշտում մի դաստակերտ (գիւղ) և անւանեց Հայք. այդ պատճառով վերջը գաւառն էլ կոչւեց Հայոց ձոր, իսկ այն բլուրը, ուր ընկաւ Բէլը, Հայկն անւանեց Գերեգման: Բէլի մարմինը նա պատել տւեց դեղերով և հրամայեց տանել Հարք և թաղել մի բարձր լեռան վրա, որ կանայք և որդիք միշտ տեսնեն իրենց ամուսինների և հայրերի քաջութիւնը:

Մինչև այսօր էլ Վանայ ծովի հարաւ-արեւմտեան ափին, Նեմրութ լեռան մօտ, դաշտի մէջ, ցոյց են տալիս մի երկար շարք կանգնած կամ պառկած սև քարերի, որ ձգւում են դէպի լեռը: Հեռւից մութ ժամանակ այնպէս է թւում՝ իբր թէ մի կարաւան է այդ, իբր թէ մարդիկ և ուղտեր են: Տեղացիք «Բէլի ուղտեր և ուղտապաններ» են ասում այդ քարերին և պատմում են, որ Հայկը սպանելով Բէլին, նրա դիակը հանել է տւել Նեմրութի դաշտը. այնտեղ նա փորել է մի թոնիր և այդ թոնրի մէջ կախել է դիակն ու վառել: Ասածու հրամանով այն կրակը ջուր է կտրւել, դիակի մոխիրը տալն է իջել, որ քամին չը տանի չը ցրւի: Բէլի մարդիկն և ուղտերն էլ երկիւղից քար են դառել: Մինչև այսօր էլ թոնիրն ու ջուրը կայ, և այդ ջուրն է, որ տեղացոյց ասելով՝ սարի տակից շարունակ բղխում է և կազմում է Մեղրագետը ¹⁾:

Պատերազմի աւարից Հայկը մեծ բաժին հանեց իր թոռ Կադմոսին, տանու ծառաներից էլ անւանի մարդիկ պարգևեց նրան, որ ժամանակին իրեն նախազգուշացրել էր Բէլի մօտենալու մասին, և պատուիրեց գնալ նախկին բնակութեան տեղը, Կորդուաց աշխարհը, իսկ ինքը վերա-

¹⁾ Նեմրութը—մարած հրաբուլիս է:

դարձաւ Հայկաշէն, ուր շատ տարիներ ապրելուց յետոյ մեռաւ. մահից առաջ նա իր ամբողջ ազգը Արմենակ աւագ որդուն յանձնեց:

Հայկի անունով է մեր ժողովուրդը կոչուել հայ, իսկ բովանդակ երկիրը Հայք կամ Հայաստան:


II

Ա Ր Ա Մ

Հայկի մահից յետոյ նրա որդիք սկսեցին ցրւել զանազան կողմեր: Արմենակը իր եղբայրներին*) տաւ Հարըը, իսկ ինքը իր ընտանիքով քաշւեց դէպի հիւսիս-արևելք, Արածանի գետի հոսանքով: Նա անցաւ բարձր լեռների միւս կողմը, և նրա առաջ բացւեց մի հրաշալի հովիտ, որն իր ընդարձակութեամբ ձգւում տարածւում էր արևմուտքից դէպի արևելք: Դաշտը շրջապատւած էր լեռների շղթաներով. նրանց ստորոտից բխում էին իստակ, ականակիտ աղբիւրներ և կազմում բազմաթիւ գետակներ: Գետակները հեզութեամբ սահում էին լեռների տակերով, դաշտի ափերով և վերջը իրար հետ զրկախառնւում էին ու դառնում մի մեծ գետ, և դետը հետզհետէ ուռչում լայնանում էր և մի ցոլացող ոսկէ գօտու պէս գօտուորում էր հովիտը արևմուտքից դէպի արևելք:

Դաշտի հարաւային կողմում, կախճես մի ծերունի երիտասարդ լեռների մէջ, նստած էր մի սպիտակափառ ձիւնապատ լեռ: Նա բուսել էր երկրից ուղղակի դէպի վեր, միայն մի տեղ մի փոքր կոտրւելով, և ամենից վեր էր բարձրացրել իր սրածայր գագաթը: Նրա գլխացր, հիւսիսում, լայն փուլէլ էր մի ուրիշ ձիւնապատ լեռ, որի գագաթը իր չորս ցից-ցից ծայրերով բարձի վրա զրւած թագի էր նմանում:

*) Այդ եղբայրներից մէկի որդին էր Բագը, որի անունով Ադի ծովը կոչւեց Բգնունեաց (Վանայ) ծով:



Արմենակը իջաւ այդ խոր հովիտը, անցաւ մեծ գետի միւս ափը ու բնակւեց այնտեղ հիւսիսային լեռան ստորոտում: Իր անունով նա լեռը կոչեց Արագած, իսկ իր կալւածքը Արագածոտն: Այդ հովտումն էլ շատ տեղ նա գտաւ առաջուց ցրւած մարդկանց և իրեն հնազանդեցրեց:

Արմենակի որդին՝ Արմայիսը հօր մահից յետոյ շինեց մեծ գետի ափին մի բլրի վրա Արմաիր աւանը. այս տեղը յետոյ ամուր քաղաք դառաւ: Այստեղ ապրեցին երկար ժամանակ Հայկի յաջորդները, ազգի նահապետները: Իր Արաստ թոռան անունով Արմայիսը գետը կոչեց Երասխ:

Արմայիսը ունէր մի շատակեր ու բազմածին որդի, որի անունն էր Շարայ. սրան նա իր մօտից հեռացրեց և տուն ու տեղով ուղարկեց Արագածի միւս կողմը, այն բարերեր և արգաւանդ դաշտը, որ մինչև հիմա էլ հռչակւած է իր առատ հունձով: Շարայի անունով այս դաշտը կոչւեց Շիրակ: Այնուհետև դեռ երկար ժամանակ հայ գիւղացիք, երբ հանդիպում էին մի շատակերի, ասում էին. «Թէ քո որկորը Շարայի որկորն է, մեր ամբարները Շիրակի ամբարները չեն», այսինքն՝ թէ մենք քեզ պահելու համար Շիրակի ամբարները չունենք:

Ամեն նահապետ այն ժամանակներում իր ամբողջ կալւածքը տալիս էր աւագ որդուն, իսկ միւս որդոց համար դեռ կենդանութեան օրով նոր և նոր հողեր էր գրտնում ու շէնացնում: Այսպէս և Արմայիսի որդի Ամասիան Արմաւիրը աւագ որդի՝ Գեղամին թողեց, իսկ կրտսերներին վերցրեց տարաւ Երասխի միւս կողմը, դէպի հարաւային սպիտակափառ լեռը: Այստեղ նա շինեց նրանց համար գիւղեր, իսկ լեռը իր անունով կոչեց Մասիս:

Գեղամին էլ, երբ հօր մահից յետոյ ազգի նահապետ դառաւ, Արմաւիրը տւաւ իր որդի Հարմային, իսկ ինքը գնաց Ազատ գետով դէպի արևելահիւսիս: Նա մի լեռ անցաւ և հասաւ մի քաղցրաշուր ծովակի, որի մէջ շատ կարմրախայտ ձկներ կան, լեռան անունը նա դրաւ Գեղ, իսկ ծովափինը՝ Գեղափունի, ծովն էլ կոչւեց Գեղամայ ծով

(այժմ Սևանայ ծով): Այստեղ ծնւեց նրան Սիսակ որդի, որ մի ամբակաղմ, գեղեցիկ, ճարտարասուն և քաջ աղեղնաւոր էր: Սրան Գեղամը ընծայեց իր ունեցածի մեծ մասը և բազմաթիւ ծառաներ ու ժառանգութեան բաժին կտրեց ծովակից մինչև այն դաշտը, որտեղ Երասխը՝ անցնելով նեղ տեղերով, քարքարոտ լեռների միջից, ահագին զղրղիւնով իջնում խառնւում է Կուր գետի հետ: Այս երկիրը Սիսակը լցրեց շինութիւններով: Արևելեան հարևանները, պարսիկները նրա անունով այս աշխարհը կոչեցին Սիսական, իսկ հայերը ասում էին Սիւնիք:

Այսպէս իրար ետեից Հայկին յաջորդեցին հինգ նահապետներ. սրանց օրով հայոց ազգը ցրւեց բնակւեց Արածանու և Երասխի հովիտներում, և իրեն հնազանդեցրեց առաջուց այստեղ եկած մարդկանց:

Բայց հէնց այն ժամանակ, երբ հայերը բազմանում և ուժեղանում էին Հայաստանում, հարևան երկիրներումն էլ ուժեղանում էին ուրիշ ազգեր: Նրանք աչքը ձգեցին և Հայոց աշխարհի վրա: Արևելքից, հարաւից, արևմուտքից գլուխ բարձրացրին օտար իշխաններ և սկսեցին ոտնակոխ անել հայոց հողերը:

Այդ ժամանակ արդէն նահապետ էր Հարմայի որդի Արամը:

Արամը, այդ աշխատասէր և հայրենասէր քաջը, լաւ էր համարում մեռնել իր պապերի թողած ժառանգութեան համար, քան թէ կենդանի աչքով տեսնել թէ ինչպէս օտարազգիների որդիք կոխտում աւերում էին հայրենի սահմանները և ստրկացնում, ծառայեցնում էին իր ազգականներին, իր արիւնակից հարազատներին: Արամը բաշութեան այնպիսի գործեր կատարեց, այնքան պատերազմների մէջ յաղթեց, այնպէս ընդարձակեց Հայոց աշխարհը ամեն կողմից, որ նրա անունը յայտնի եղաւ ամեն ազգերի մէջ և օտարները նրա անունով հայերին արմեն, իսկ Հայաստանը Արմենիա կոչեցին:

1001
3981

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՐԱՆ
7/11-1922
ՄԱՍԻՍ

Մօտ երկու տարի էր, որ արևելքից, Երասխի միւս կողմից, մտել էին մեղացի երիտասարդները: Նրանց առաջնորդն էր մի ոմն Նիւքար Մադէս, մի գոռոզ և պատերազմասէր մարդ: Այդ վայրենիները իրենց ձիերով ամբակակոխ էին անում հայոց հողերը և ստրկացնում հայերին: Արամը ժողովեց իր ազգականներից քառասուն հազար կըտրիճ տղամարդ, բոլորն էլ քաջ աղեղնաւոր, ուժեղ, աջողածեռն ու վայելչակազմ երիտասարդներ: Նա յանկարծակի յարձակեց Նիւքար Մադէսի ու մեղացիների վրա և առաջ քան արեգակը ծագեց, կոտորեց այդ վայրենի բազմութիւնը, հէնց իրան Նիւքար Մադէսին էլ բռնեց և ուղարկեց Արմաւիր: Արամը հրամայեց մեխել Նիւքարին ճակատից պարիսպի աշտարակի ծայրին, որ ամեն անցորդ, եկող գնացող տեսնի թէ ինչպէս է վրէժխնդիր լինում Արամը իր հայրենի հողը կոտորողներից: Այնուհետև նա ինքն է հարկի տակ գնում մեղացոց ամբողջ երկիրը:

Այս յաղթութիւնը տանելուց յետոյ, Արամը նոյն գործով խաղաց դէպի հարաւ, որովհետև այնտեղ էլ կար հայոց երկրի մի ասպատակիչ: Դա հսկաների ցեղից Բարշամ անունով մէկն էր: Քառասուն հազար հետեակ և հինգ հազար հեծեալ մարդկանցով Բարշամը մտել էր Կորդուաց աշխարհից այս կողմ, սաստիկ նեղում էր անողորմ հարկերով հայերին և անապատ էր դարձրել ամբողջ շրջակայքը: Արամը նրա հետ ճակատեց, կռիւ մէջ յաղթեց նրան ու հալածեց Կորդուաց երկրի միջով մինչև Ասորեստանի դաշտը: Թշնամիներից շատերը հայերի սրից ընկան, իսկ Բարշամը սպանեց, հանդիպելով Արամի զինակիրներին: Բայց ասորեստանցիք չը հաւատացին որ Բարշամի պէս բաջ և ուժեղ մարդը կարող էր մեռնել, և շատ դար ասածու տեղ էին պաշտում նրան: Այստեղ էլ Արամը ասորեստանցոց երկրի մի մասը իրեն հնազանդեցրեց և երկար ժամանակ այս կողմերից հարկ առաւ:

Այսպէս նա ոչնչացրեց երկու թշնամիներին: Բայց ամենից վտանգաւորն էր Պայապիս Քաղեայ, որը բռնել էր

ամբողջ Կապադովկիան, Պոնտոսից (Սև ծովից) և ինչև Միջերկրական ծովը: Այս Տիտանեանը այնքան ուժեղ էր, որ Արամը յոյս չունէր նրան շուտով յաղթելու: Ուստի նա արևելեան սահմանների պաշտպանութիւնը յանձնեց Սիսակեաններին, իսկ հարաւային սահմանները՝ Կադմեաններին, որ այդ կողմերից ապահով լինի, աւելացրեց իր նախկին զօրութեան վրա այլ ևս քառասուն հազար հետեակ և երկու հազար հեծեալ ու միայն այսպիսի պատրաստութիւն տեսնելով՝ գնաց դէպի արևմուտք, դէպի Փոքր Ասիա: Նա անցաւ Եփրատը, անցաւ և Տօրոսի շղթան ու վերջապէս պատահեց Պայապիսին: Կռիւ մէջ հսկաներ պատահեցին հսկաներին, բայց Պայապիսը այնպիսի ջարդ կրեց, որ գլուխը կորցրած, փախաւ մինչև ծովափ ու շտապեց անցնել մի կղզի. այնուհետև այլ ևս նրա անունը ոչ մի տեղ չը լսեց:

Պայապիսի աշխարհը Արամը միացրեց իր երկրի հետ և այնտեղ կառավարիչ նշանակեց Մշակին, իր ազգականներից մէկին, տալով նրան տասը հազար զօրք: Արմաւիր վերադառնալուց առաջ նա հրամայեց, որ այդ կողմերի բոլոր բնակիչները սովորեն հայերէն լեզուն և խօսեն հայերէն: Այդ է պատճառը, որ այդ աշխարհը վերջը անւանւում էր Առաջին Հայք: Սակայն այստեղի մարդիկ երբեք չը սովորեցին հայերէն լաւ խօսել: Մշակը Ալիւս գետից ոչ հեռու մի փոքրիկ պարսպապատ քաղաք շինեց և իր անունով կոչեց Մշակ, բայց տեղացիք չը կարողանալով ուղիղ հնչել ասում էին Մաթաթ*):

Արամը այդ կողմերից սկսած մինչև բուն Հայաստանը, ամբողջ դատարկ տարածութիւնը լցրեց բնակիչներով, այնպէս որ այդ հողերը յետոյ կոչւեցին Երկրորդ, Երրորդ, Նոյն իսկ Չորրորդ Հայք:

Այլ ևս ուրիշ շատ մեծամեծ գործեր կատարեց Արամը, որոնց համար ամեն ազգ նրան գովաբանում էր:

*) Այս քաղաքը շատ յետոյ աւելի ընդարձակ շինեց և կոչւեց Կեսարիա (այժմ Կայսարիէ):

Մէկը կար սակայն, որ չէր տանում նրա անունը. դա Նինոս թագաւորն էր: Նա, Տիգրիսի ձախ ափին շինելով Նինւէ քաղաքը, աշխատում էր իր իշխանութեան լուծը դնել բոլոր դրացի ազգերի վրա: Նինոսը լսել էր իր պապ Բէլի յաղթելը Հայկից և մտադիր էր վրէժխնդիր լինել նրա մահւան համար: Նա տաբիներով մի յարմար դէպքի էր սպասում, որ արմատից ջնջի Հայկի ամբողջ ցեղը: Բայց Արամը շատ հզօր էր և քաջ: Նինոսի հոգու մէջ ծանր կասկած ընկաւ, չը լինի թէ այդ պատերազմից վնաս հասնի հէնց իր թագաւորութեանը: Ահա թէ ինչու նա ծածկեց իր չար մտադրութիւնը, մարդ ուղարկեց Արամի մօտ և իր գոռոզ անմտութեամբ հրամայեց որ Արամը անկասկած և աներկիւղ վարի իր իշխանութիւնը: Նա իրաւունք տւեց Արամին մարդարտէ վարսակալ (մազերի շուրջը կապւող զլխազարդ) կրելու և իրենից յետոյ աշխարհիս երեսին երկրորդը կոչւելու:

Այս Նինոսը այնքան հպարտ էր ու մեծամիտ, որ ստիպում էր որ իր հպատակները ամեն քաջագործութեան սկիզբը միայն իրեն համարեն և փառաբանեն միայն իր գործերը. նա այրել էր տալիս ամեն գիրք, որտեղ գովասանք էր գրւած լինում մէկ ուրիշի մասին: Բայց նրա բոլոր ջանքերին հակառակ՝ աշխատասէր և հայրենասէր Արամի անունը աւելի ու աւելի հեռու էր տարածւում, անցնում էր որդէց որդի և դեռ չէ մոռացւել մեր օրերում էլ:

III

ՇԱՄԻՐԱՄ ԵՒ ԱՐԱՍ ԳԵՂԵՑԻԿ

Արամ նահապետի գորութեան անունը այնքան մեծ էր, որ նոյն իսկ նրա մահից յետոյ Ասորեստանի աշխարհակալ թագաւոր Նինոսը չը համարձակեց Հայաստանի վրա գալ ու նրա որդի Արային էլ տւեց նոյն պատիւները, ինչ որ տւել էր Արամին: Այսպէս Արան էլ հօր պէս մարգարտէ վարսակալ էր կրում զլխին և կոչւում էր աշխարհիս երեսին երկրորդը Նինոսից յետոյ:

Բայց իր գեղեցկութեամբ նա աշխարհիս երեսին առաջինն էր:

Մարդ կամ, որ տեսնելով Արային չը հիանար նրա տեսքից: Ճանապարհորդներն ու երգիչները երկրից երկիր շրջելով՝ նրա աննման գեղեցկութեան գովասանքն էին անում: Արայի համբաւը հասաւ և Նինւէ քաղաքը: Նինոսի կին Շամիրամը, որի չքնաղ երեսով ու նուրբ կազմաւորով պարծենում էին Ասորեստանի հպատակ ազգերը, իմացել էր նրա գեղեցկութեան մասին ու չէր կարողանում հանգիստ լսել նրա անունը: Շամիրամը անտես հալւում էր Արայի կարօտից, բայց քանի որ ամուսինը կենդանի էր, նա յայտնապէս ցոյց չէր տալիս իր սէրը: Բայց երբ Նինոսը մեռաւ կամ, ինչպէս շատերն ասում են, փախաւ Կրետէ կղզին իր խորամանկ կնոջ ձեռքից ու Շամիրամը սկսեց կառավարել երկիրը, քանի որ զաւակները դեռ մանկահասակ էին, — նա չը կարողացաւ այլ ևս թագցնել իր սրտի ցանկութիւնը, անհամար թանգագին նւէրներ ուղարկեց Արա Գեղեցկին ու դեսպանների բերանով ապսպրեց:

— Արա, եղիւր ինձ ամուսին, իսկ ես կը լինեմ քեզ կին: Քեզ կընծայեմ Նինոսի անասման երկիրները, քեզ կը հնազանդւեն թագաւորները, իշխաններն ու մեծամեծները, և քո ոտների փոշին կը համբուրեն: Եւ քեզից հզօր ոչ ոք չի լինի աշխարհի երեսին, ու կը փայլենք ես ու զու մեր զահի վրա երկու աստղերի պէս: Շտապիւր ինձ մօտ, իմ աննման:

Այսպէս էր աղաչում Շամիրամը: Իսկ Արան, որ ամբողջ հոգով կապւած էր իր կին Նւարդի հետ, խստութեամբ արհամարհեց Շամիրամի պաղատանքն ու մերժեց գնալ Նինւէ:

Շատ անգամ գնացին եկան դեսպանները, աւելի ու աւելի շատ ոսկի և անգին ակներ բերելով, բայց ոչինչով չը կարողացան գրաւել Արայի սիրտը:

Դեսպանները վերադառնալով՝ զմայլած փառաբանուր

էին Արայի գեղեցկութիւնը և նրանց խօսքերը լսելիս՝ Շամիրամը կսկծից ու կարօտից գրեթէ ուշաթափուում էր:

Այն ժամանակ նա վճռեց բռնութեամբ անել տալ Արային այն, ինչ որ չէր կարողանում անել տալ ընծաներով և աղաչանքներով, — ստիպել դառնալ իր ամուսինը: Նա հաւաքեց իր բազմալեզու ազգերից անթիւ զօրքեր ու շտապեց հասնել այն դաշտը, որը Արայի անուհով կոչւում էր Այրարատ: Այստեղ նրա դէմ դուրս եկաւ Արան իր փոքրաթիւ մարդկանցով:

Շամիրամի միտքը Արային սպանելը չէր. ուստի նա կուից առաջ խիստ պատէր տւաւ իր զօրապետներին.

— Չը լինի թէ սպանէք Արային: Ես կենդանի եմ ու գում նրան ունենալ: Կենդանի բռնեցէք և ինձ մօտ բերէք նրան:

Բայց կուի տաք ժամանակ Ասորեստանի զինւորները չը կարողացան ջոկել Արային քաջերի խմբի մէջ ու պատահմամբ նրան սպանեցին: Վշտից ցնցւեց Շամիրամը՝ լսելով նրա մահը և զիակապուտներ ուղարկեց, որ որոնեն գտնեն ընկածների մէջ իր սիրելիի զիակը:

Արայի զիակը գտան ու բերին Շամիրամի ապարանքը. մեռած էլ նա գեղեցիկ աննման էր: Սուգ ու շիւան բարձրացրեց Շամիրամը ու չէր ուզում աչքերին հաւատալ: Մագերը փետելով նա ողբում էր և ասում որ անկարելի է որ այդպիսի գեղեցիկը երբ և իցէ մեռնի:

— Տարէք, մանուկներ (զինւորներ), տարէք այս զիակը իմ ապարանքի վերնատունը: Աղերսենք պաղատենք առ լեզնեքին*), որ գան կենդանացնեն գեղեցիկ Արային:

Երբ Արայի մարդիկ իմացան որ իրենց նահապետը սպանւել է և նրա զիակը գտնուում է թշնամու ձեռքին, նրանք չը տեսնւած անպատուութիւն համարեցին այդ ի-

*) Հեթանոսները թէ Ասորեստանում և թէ Հայաստանում հաւատացած էին, որ գոյութիւն ունեն առ լեզ կան արալեզ աստուածներ, որոնք շնորհից են ծնւել ու լիզելով կենդանացնում են պատերազմի մէջ ընկած քաջերին:

րենց ամբողջ ազգի համար ու մէկ մարդու պէս ոտքի կանգնեցին, պատրաստեցին Շամիրամի վրա յարձակւելու, որ Արայի մահւան վրէժը հանեն ու նրա զիակը խլեն: Շամիրամը դուրս եկաւ նրանց առաջ և ասաւ.

— Հրամայեցի իմ աստուածներին որ լիզեն Արայի վէրքերը, ու նա պիտի կենդանանայ:

Եւ մեր հեթանոս պապերը հաւատացնում էին, որ արդարեւ Արան կենդանացաւ:

Այն ժամանակ Շամիրամը հաւաքեց ամենքին ու բարձրաձայն յայտարարեց.

— Ողջացրին աստուածները Արայի վէրքը ու կենդանացրին նրան: Փառաւորւի նրանց անուհը, որ մեր աղաչանքը կատարեցին, և թող աւելի պաշտելի լինեն նրանք այսուհետեւ մեր մէջ:

Եւ այդտեղ նա կանգնեցրեց առկեզներ ի մի նոր արձան ու մեծամեծ զոհեր մատուցեց այդ արձանին: Իսկ Արային բռնի պահեց իր մօտ պալատում, մինչև իր մահը:—

Շամիրամը մի քանի ժամանակ մնաց այն դաշտում, որտեղ տեղի ունեցաւ կռիւը, ապա՝ երբ ամառը վրա հասաւ, նա անցաւ դէպի հարաւ և սկսեց զբօսնել լեռների ծաղկաւէտ հովիտներում ու դաշտերում: Նա հիանում էր երկրի գեղեցկութիւնից, օդի մաքրութիւնից, աղբիւրների խտակութիւնից, գետերի կարկաջահոսութիւնից և ասաւ.

— Արժէ որ մեզ պէս թագուհին իր համար մի քաղաք ու պալատ ունենայ այսպիսի բարեխառն օդի և մաքուր ջրերի մէջ, արժէ որ տարւայ չորրորդ մասը, ամառը, ամենայն զւարճութեամբ այստեղ անցկացնենք, իսկ մնացած հով եղանակները մեր նինւէում:

Եւ շատ տեղեր ման եկաւ նա, մինչև որ եկաւ Աղի (Բզնունեաց) ծովի արևելեան ափը: Այստեղ ծովի ափին նա տեսաւ մի երկարածիկ բլուր, որ տարածւում էր դէ-


պի արևելահիւսիս. բլրի հարաւային ծայրին ուղիղ գէպի երկինք, անշեղ բարձրանում էր մի քարսփայլո: Սրա ստորոտում՝ սարի արևելեան կողմով տարածւում էր մի դաշտաձև հովիտ, որը ծովի ափն իջնելիս՝ փոխւում էր ընդարձակ և գեղեցիկ ձորի: Սաբից թափւում էին բարեհամ ջրեր, որոնք վազում էին ձորակներով և միաւորւում՝ փառաւոր գետեր կազմում: Այս հովտաձև ձորի մէջ կային ցիր ու ցան շատ գիւղեր:

Ահա այս տեղը Շամիրամը ընտրեց իր ամարանոցի համար և հրամայեց որ Ասորեստանից և իր իշխած ուրիշ երկիրներից բերեն տասններկու հազար ընտիր և հմուտ գործաւորներ, որոնք լաւ գիտէին փայտի ու բարի, պղնձի ու երկաթի արհեստները:

Երբ այս ամբողջ բազմութիւնը եկաւ հաւաքւեց, հնարագէտ թագունին հրամայեց նախ և առաջ գետի ամբարտակը շինել: Տեղ-տեղ ապառաժները կտրեցին, տեղ-տեղ էլ խոշոր քարեր աւազով ու կրով շարեցին և շինեցին այն լայն ու բարձր առուն, որը մինչև այժմ էլ գրեթէ անխախտ մնում է: Քարերը այնպէս ամուր են ծեփած, որ եթէ մէկը ուզենայ մի փոքր քար գոնէ պոկել պարսատկի համար, ինչքան էլ աշխատի՝ չի կարողանայ: Այս ամբարտակի մէջ հաւաքելով հեռուից ջրերը՝ Շամիրամը բերում է հասցնում նշանակած տեղը:

Այնուհետև նա սկսում է բուն քաղաքի շինութիւնը: Նա դաս դաս է բաժանում իր գործաւորներին և իւրաքանչիւր դասի վրա կարգում է ընտիր ճարտարապետներ: Շատ տարիներ չարչարեցին աշխարհի ամեն ծայրերից բռնի հաւաքւած բանւորները, մինչև որ աւարտեցին հրաշալի շինութիւնը՝ ամուր պարիսպներով և պղնձե դռներով: Քաղաքի մէջ շինեցին ընտիր-ընտիր, կրկնայարկ և եռայարկ պալատներ զանազան գոյնի քարերից, այնպէս որ մէկ թաղը միւսից ջոկւում էր առանձին գոյնով և բաժանւում էր լայն-լայն փողոցներով: Այս

ու այնտեղ շինեցին նաև զարմանք շարժող բաղանիքներ: Իր բերած առւի մի մասը Շամիրամը անց կացրեց քաղաքի միջով ամեն տեսակ պէտքերի համար, ծաղկոցներն ու բուրաստանները ջրելու համար, իսկ միւս մասը հասց-



Վանայ քաղաքը

րեց ծովակի աջ ու ձախ ափին՝ շրջակայքը ջրելու համար: Քաղաքի շուրջը նա տնկել տւաւ ամեն տեսակ փայտէր և պտղաբեր ծառեր և մանաւանդ բազմաբեր գինու որթեր:

Բայց այս բոլոր հրաշակերտ շինութիւնների մէջ առաջինն ու ամենից փառաւորը այն էր, որ նա շինեց քաղաքի ծայրին:

Նա պարսպել տւաւ հարաւային ժայռի դազաթը

և փորել տւաւ ամուր ապառաժի մէջ դժւարամուտ և դժւարելանելի թագաւորանիստ դանլիճներ, օթեաններ և գանձատուններ և խոր անցքեր, որոնց նշանակութիւնը շատերը այժմ չը գիտեն: Ժայռի արեւելեան երեսը, որը այնքան կարծր է, որ երկաթով անգամ չի կարելի վրան մի գիծ քաշել, նա ողորկել տւաւ և գրեց զարմանալի գրերով իր գործերը. այդպիսի գրերով Հայաստանի ուրիշ շատ տեղերումն էլ արձանների վրա իր յիշատակը թողեց:

Այսպէս շինելով հոյակապ քաղաքը, նա անթիւ բազմութիւն բնակեցրեց նրա մէջ:

Շամիրամի անունով այս զարմանալի քաղաքը կոչւեց Շամիրամակերս, բայց ժողովուրդը վերջը սկսեց ուղղակի «Վան» ասել, այսինքն «քաղաք», «ապաստարան», Բըզնունեսց ծովն էլ այդ պատճառով կոչւում է Վանայ ծով:

Այստեղ էր Շամիրամը անցկացնում ամեն ամառ, իսկ այդ ժամանակ Նինէլի ու Ասորեստանի վրա կողմնապետ էր թողնում մարերի նահապետ Զրադաշտ մոզին: Որչափ գեղեցիկ ու հնարագէտ էր նա, այնքան էլ քաջ ու արի: Նա շատ նոր երկիրներ աւելացրեց Նինոսի հողերի վրա և իր զօրքերով հասաւ մինչև Հնդկաստան: Բայց վերջը նա այնքան հաւատաց Զրադաշտին, որ իշխանութիւնը բոլորովին նրան յանձնեց, իսկ ինքը իր օրերը անց էր կացնում ուրախութիւններով և զւարճութիւններով բարեկամների և սիրելիների հետ: Նա վատնում էր Նինոսի թողած հարստութիւնները, գանձեր ու պաշտօններ էր բաժանում իր բարեկամներին և հոգ չէր մտածում իր որդիների մասին:

Նրա որդիները չափահաս դառնալով՝ մօր երեսուցի էին տալիս նրա վատ արարմունքը և պահանջում էին որ իրենց յանձնի հայրական իշխանութիւնն ու գանձերը: Այն ժամանակ Շամիրամը կոտորել տւաւ բոլոր որդիներին,

բացի կրտսերից, Նինւասից, և այնուհետեւ աւելի անձնատուր եղաւ զւարճութիւնների և շոպյութիւնների:

Ասում են, մի օր Շամիրամը դուրս գալով ծովափ զբօսնելու՝ տեսաւ մի խումբ մանուկներ, որոնք գննում



Շամիրամը արձակեց իր մագեր, օլօեց պարստակի պէս:

էին աւագի մէջ գտած մի ուլունք: Թագուհին իսկոյն հասկանում է ուլունքի զօրութիւնը, խլում է մանուկների ձեռքից և փոխարէնը պարգևներ է տալիս նրանց: Ուլունքը կախարդական ուժ ունէր: Շամիրամը նրանով ումն

ուզում էր՝ հմայում էր և իրեն սարուկ էր դարձնում, ումն ուզում՝ կորցնում, փչացնում: Եւ աշխարհը նրա ձեռքին խաղալիք էր եղել:

Մինչդեռ Շամիրամի ուշքն ու միտքը վայելքների հետ էր, Զրադաշտ մոզը կամենում էր խորամանկութեամբ նրա իշխանութեանը տիրանալ և բոլորի վրա բռնանալ: Ուշ նկատեց Շամիրամը այս բանը և գնաց նրա դէմ կուելու: Զրադաշտի հետ միացաւ Նինւասը: Պատերազմի մէջ Շամիրամը յաղթեց և ոտով սկսեց փախչել Հայաստան: Նա փախչում էր առանց դադար առնելու, ծարաւում, ջուր էր խմում և կրկին փախչում, իսկ թշնամիների սուսերաւոր (սուր կրող) զինուորները նրան հալածում էին: Սուսերաւորները նրան հասան վերջապէս, խլեցին նրանից կախարդական ուլունքը և քշեցին իրենց ձիերը որ ուլանքը Բզնունեաց ծովը գցեն: Յոգնած, ուժասպառ՝ Շամիրամը արձակեց իր չքեղ մագերը, ուրեց պարսատկի մէջ ու ուժեղ ձեռքով սկսեց պտտացնել, որ արձակի փախչողների ետեից: Բայց սաստիկ կատաղութիւնից այնպէս ուժով էր պտտացնում, որ մագերը պոկւեցին, ապառաժը դուրս ընկաւ թռաւ հեռու¹⁾, իսկ ինքը Շամիրամը յուսահատութիւնից տեղն ու տեղը քար կտրեց: Սուսերաւորները փախցրին ուլունքը, ձգեցին Վանայ ծովը: Այն օրից ի վեր ժողովուրդն ասում էր «Ուլունք Շամիրամայ ի ծով», այսինքն՝ թէ «Շամիրամի ուլունքը ծովն ընկաւ», երբ ուզում էր ասել թէ՝ բոլոր հնարներդ ու խորամանկութիւններդ գուր անցան:

Այդ պատերազմում Շամիրամի հետ սպանեց Արան. Արային յաջորդեց Անուաւանը, որին տարան Նինւէ: Արամը բաջ էր, Արան գեղեցիկ, իսկ Անուաւանը հանձարեղ և իմաստուն, ճարտար լեզւանի և ամեն գործի մէջ շնորհքով: Նա կոչւում էր Սօս, որովհետեւ փոքրուց նւիրւած էր սօսի ծառերի անտառին: Այս անտառը Ար-

¹⁾ Արտամետ գիւղի մօտ, Վանից ոչ հեռու, ցոյց են տալիս այդ ապառաժը, որ ընկել խոր փոս է կազմել գետնի մէջ:

մենակ նահապետն էր տնկել Արմաւրի մօտերքում: Այստեղ քուրմերը հետեւում էին նւիրական ծառերի տերևների սօսափրւնին և շարժումներին, օգի հանդարտ կամ սաստիկ շարժելու ժամանակ, և գուշակութիւններ էին անում:

Անուշաւանը բաւական տարիներ մնաց Նինւէի պալատում՝ անպատիւ և արհամարհւած, բայց վերջը իր խելքով և բարեկամների օգնութեամբ նա ստացաւ նախ իր հայրենի երկրի մի մասը, իսկ յետոյ ամբողջը կառավարելու իրաւունքով, բայց պիտի հարկ վճարէր ասորեստանցոյց:

Այսպէս հարկատու դարձաւ Հայոց աշխարհը և նսեմացաւ քաջասիրտ Արամի երկրի փառքը:

IV

ՏԻԳՐԱՆ ԵՐԻԱՆԻԵԱՆ

Երկար տարիներ Անուշաւան Սօսանէրից յետոյ Հայաստանի նահապետները հարկ վճարեցին ասորեստանցոյց, շատ հարստութիւններ հոսեցին Հայոց երկրից Նինւէի գանձարանը: Ասորեստանի անկշտում թագաւորներն ու պալատականները քանի գնում աւելի ու աւելի զւարճութիւնների ետեից էին ընկնում, ապրում էին շուայլ ու անմարդավայել, իսկ գործերը կառավարում էին յայտնի կաշառակեր, փչացած պաշտօնեաներ, որոնք ճնշում էին հպատակ ազգերին, և աշխարհի մէջ ոչ արդարութիւն կար, ոչ էլ ապահովութիւն:

Ասորեստանից դէպի արեւելք, Զագրոշ լեռների միւս կողմը, Ուրմիոյ լճից մինչև Կասպից ծովը և մեր Երասխը, այդ ժամանակ բնակւում էին մարեր, կամ մեդացիք: Մարերի խորամանկ ու բաջ թագաւորը օգուտ քաղեց Նինւէի թագաւորի անփութութիւնից ու կեղտոտ վարքից և խորամանկութեամբ ու փողով սկսեց բարեկամներ գրաւել Ասորեստանի զօրավարների և կառավարիչների մէջ: Նա

իր կողմը քաշեց բաբելացոց և պարսից իշխաններին. այդ ժամանակաւ հայոց նահապետին էլ, Պարոյրին, նա խոստացաւ թագաւորական շուք և պատիւ, և այսպիսով բազմաթիւ կողմնակիցներ շահելով՝ գնաց Նինւէի վրա, վերցրեց այս քաղաքը, այնտեղ կուսակալ նշանակեց, իսկ ինքը վերադարձաւ իր երկիրը:

Այսպէս ընկաւ Ասորեստանը, այսպէս էր որ Պարոյրը դառաւ առաջին հայոց պսակակիր թագաւոր:

Պարոյրից յետոյ իններորդ թագաւորն էր Երւանդի որդի Տիգրանը: Սա մեր թագաւորներից ամենից հզօրն էր, ամենից իմաստունը և ամենից քաջը: Շատ թագաւորներ են Տիգրան անունը կրել, բայց այս Երւանդեան Տիգրանը մի և միայնակն էր, որ իր նման քաջ պատերազմողների գլուխ կանգնելով՝ քաջութիւն ցոյց տւաւ, մեր ազգը բարձրացրեց, նախանձելի դարձաւ իր ժամանակակիցների համար և ցանկալի ու օրինակելի յետնորդների համար: Նա մեր բնակութեան սահմանները հին սահմաններին հասցրեց և մեզ, որ օտարների լծի տակ էինք, ոչ միայն լծից ազատեց, այլ և լուծը բազմաթիւ ուրիշ ազգերի վրա դրեց:

Այսպէս էին նրանով պարծենում մեր պապերը:

Նրա մագերը շէկ էին և գանգուր, երեսը զւարթ, սպիտակ ու կարմիր, աչքերը քաղցրաժպիտ, կազմաւորւած ամուր, թիկունքը լայն, ազդրները լիք, ոտները գեղեցիկ, իսկ ինքը պարկեշտ էր և չափաւոր ամեն բանի մէջ, թէ կեր ու խումի և թէ զւարճութեանց մէջ, և մեծիմաստ էր ու պերճախօս, մի խօսքով՝ ամեն բանով կատարեալ: Ժողովուրդը բառ չէր գտնում գովելու և փառաբանելու նրա արդարամտութիւնն էլ և հաւատարմութիւնը: Նա ամենքին հաւասար աչքով էր նայում, ամենքի արարմունքը իր մտքում հաւասար լծակով էր կշռում, ոչ իրենից լաւերին էր նախանձում, ոչ էլ իրենից վատերին էր

արհամարհում, այլ ամենքի վրա հաւասար աշխատում էր տարածել իր խնամքի փէշերը:

Բայց մեր քաջ և իմաստուն Տիգրանը անւանի էր ոչ միայն իր արդարամտութեամբ. աշխարհին յայտնի էր և նրա ընկերակցութիւնը: Այդ լաւ գիտէր մարաց թագաւոր Աթահակը, որին մեծ վիշտ էր պատճառում Տիգրանի բարեկամութիւնը պարսից թագաւոր Կիւրոսի հետ:

Աթահակը կասկածելով էր նայում Կիւրոսին, վախում էր նրա օրէց օր ուժեղանալուց, և չէր կարողանում հանգիստ քնել. նա շարունակ մտածում էր՝ չը լինի թէ Տիգրանն ու Կիւրոսը միացած իր վրա դան: Շատ անգամ նա հարցնում էր իր խորհրդակիցներից՝ չը գիտե՞ն արդեօք մի հնար, որ կարողանան այդ երկուսի սիրոյ կապը կտրել: Եւ միշտ այսպէս շփոթութեան մէջ էր:


Նա լսել էր թէ ինչպէս Տիգրանը կարգաւորել էր իր բազմաթիւ զօրքերը: Տիգրանը հետեակներին ձիերի վրա էր նստեցրել, պարսաւորներին աղեղ էր տւել, շերտաւորներին (կացնով զինւածներին) սուր և նիզակ, ով որ զրահ չունէր, երկաթէ զրահ ու վահան էր տւել, և երբ այս ամբողջ զօրութիւնը մէկ տեղ էր հաւաքւում, բաւական էր թշնամիները տեսնելին միայն նրանց պահպանակների և գէնքերի փայլմունքն ու շողշողիւնը, որ սարսափահար փախչէին: Այս զօրութեամբ քանի-քանի երկիրներ էր նա նւաճել:

Ահա այս ուժիցն էր սոսկում մար Աթահակը: Ու մի գիշեր, սաստիկ մտածելուց, նա զարհուրելի երազ է տեսնում, տեղից վեր է թռչում և չը նայելով որ դեռ շատ մութ էր և սովորութիւն չը կար գիշերով կանչել խորհրդակիցներին, իսկոյն ուղարկում է նրանց ետեից:

Յկան հաւաքւեցին խորհրդակիցները. տեսնում են թագաւորը աչքերը գետնին անշարժ յառել է, երեսը տրտում նստած է, խորը յոգւոցներ է հանում և մռնչում:

Հարցնում են՝ ի՞նչ է պատահել. նա երկար ոչինչ չի պատասխանում և վերջապէս, այլեւ չը կարողանալով ծածկել իր կասկածները, նա վշտաբեկ պատմում է.

«Այսօր երազում, ով սիրելիներ, իբր թէ մի ինչ որ անծանօթ երկրում էի մի բարձր լեռան մօտ, որի գագաթը կարծես պատած լինէր սաստիկ սառնամանիքով. ինձ ափսոսում էի, եւ Հայոց աշխարհում եմ: Երկար նայում էի սարի գագաթին և այնտեղ ինձ երևաց նստած մի բարձրահասակ և կարմրայտ, գեղեցիկ կին՝ ծիրանի հագին և երկհային քօղն երեսին: Եւ երբ երկար հիացած նայում էի



Աժդահակի երազը

այդ տեսիլքին, յանկարծ այդ կինը ծնեց երեք կատարեալ դիւցազոր: Առաջինը նրանցից առիւծի վրա հեծաւ ու թռաւ դէպի արևմուտք, երկրորդը մի ընձու վրա նստեց և զիմեց գէպի հիւսիս, իսկ երրորդը մի անագին վիշապ սանձեց և եկաւ յարձակեց իմ տէրութեան վրա: Եւ յանկարծ երազս խառնեց, և մէկ էլ ինձ տեսայ իմ պալատի տանիքի վրա, որ զարդարւած էր գեղեցիկ գոյնզգոյն շատրւաններով. այնտեղ կանգնած էին մեզ պսակող աստ-

ւածները հրաշալի տեսքով, իսկ ես ձեզ հետ զոհեր էի բերում նրանց և խուսկ էի ծխում: Յանկարծ վեր նայեցի— տեսայ որ այն վիշապի վրա նստողը, արծւի նման թևեր առած, թռչում է ինձ վրա և կամենում է աստւածներս կործանել: Ես, ընկայ նրա և կուռքերի մէջ, հարւածը ինքս ընդունեցի, և սկսեց իմ և զիւցազնի մէջ կատաղի կռիւ: Նախ մենք նիզակներով միմեանց վիրաւորեցինք, և մեր արիւնը վտակի պէս հոսեց և տանիքի երեսին ծով բռնեց: Յետոյ շարունակեցինք կուել ուրիշ զէնքերով: Բայց ի՞նչ երկարացնեմ: Վերջն այն եղաւ, որ ես ընկայ: Ու վեր թռայ քնից սաստիկ քրտնած և ուղարկեցի ձեր ետևից: Պարզ է որ Տիգրանից մեզ մեծ վտանգ է սպառնում, որ նա յարձակւելու է մեզ վրա: Խօսեցէք, ասացէք՝ ի՞նչ խորհուրդ կը տաք: Ինձ թագաւորակից ո՞վ է ուզում ձեզանից լինել:

Եւ թագաւորը մէկի միւսի խորհուրդը լսեց, շնորհակալութիւն արաւ և վերջը կրկին ինքը այսպէս խօսեց.

«Շատ խելօք, շատ իմաստուն խորհուրդներ լսեցի ձեզանից, սիրելիներ. հիմա տեսէք թէ ես ինչ եմ մտածում: Թշնամուց զգուշանալու ամենալաւ միջոցն այն է, որ սիրող ձեռնանք և սիրոյ պատրւակով դաւ սարքենք: Կուգենք Տիգրանի գեղեցիկ բոյր Տիգրանուհուն մեզ կին և երբ մեր ու հայոց թագաւորի մէջ յաճախ եկող զնացող կը լինի, ծածուկ կը կաշառենք Տիգրանի բարեկամներին, պարգևներ և պատիւներ կը խոստանանք և նրանց ձեռքով սրով կամ թոյնով նրան սպանել կը տանք և կամ ոսկով մեր կողմը կը քաշենք նրա կողմակիցներին, որ նա մենակ մնայ, և այսպէս հեշտութեամբ կը բռնենք նրան իբրեւ մի անգոր տղայի»:

Այս միտքը տմենք հաւանեցին, և Աժդահակը զրեց մի նամակ ու խորհրդակիցներին մէկին յանձնելով՝ բազմաթիւ զանձներով ուղարկեց Տիգրանին:

Իսկ նամակի մէջ գրւած էր այսպէս.

«Գիտէ սիրելի եղբայրութիւնդ որ աշխարհիս երեսին աստուածները ոչ մի աւելի օգտակար բան չեն պարգևել մեզ, քան թէ սիրելիներէ թիւը բազմացնելը, մանաւանդ իմաստուն և հզօր սիրելիներէ: Այն ժամանակ և դրսից ոչ մի թշնամի չի համարձակել յարձակել, ոչ էլ ներսում որևէ ապստամբ գլուխ կը բարձրացնի: Ուստի՝ տեսնելով թէ ինչ մեծ օգուտներ են ծագում բարեկամութիւնից, ես մտածեցի աւելի խորը հաստատել իմ և քո մէջ եղած սէրը, որ ամեն կողմից ուժեղանալով՝ ես և դու ապահով պահենք մեր տէրութիւնները: Իսկ այս կը լինի այն ժամանակ, երբ դու ինձ կնութեան կը տաս Հայոց օրիորդին, քո քոյր Տիգրանուհուն, եթէ միայն բարի ես կամենում նրան, որովհետեւ նա կը լինի ինձ մօտ թագուհիների թագուհի: Ողջ եղիր, մեր թագակից և սիրելի եղբայր»:

Այս նամակը ստանում է Տիգրանը և ոչ մի նենգութիւն չը կասկածելով՝ պատուով, ինչպէս թագաւորները սովորութիւնն էր, ուղարկում է իր քրոջը Մարաստան: Աժդահակը Տիգրանուհուն տիկնանց տիկին նշանակեց, ոչ թէ միայն նրա համար, որ մտքում նենգութիւն ունէր, այլ և որ աղջիկը իրաւ շատ գեղեցիկ էր: Այնուհետև ոչինչ չէր անում առանց նրա խորհրդի, նրա խօսքով էր ամեն գործ կարգադրում, նրան հնազանդւել էր ամենքին հրամայում:

Եւ այսպէս աշխատելով աղջկայ սիրտը շահել, Աժդահակը սկսում է քաղցր լեզուով նրա ականջին շնչալ:

— Ի՞նչ չը գիտես թէ ինչ նախանձոտ կին է Տիգրանի կին Չարուհին. նա աչք է ձգել քո տիկնանց տիկնութեան վրա և մեր գէմ է գրգռում Տիգրանին, որ նա դառնայ Արեաց (մարերի) թագաւոր, ինքը Արեաց թագուհի: Ի՞նչ պիտի լինի սրա վերջը. առաջ ես կը մեռնեմ, իսկ յետոյ Չարուհին կը դառնայ Արեաց տիկին և աստուածուհիների տեղը կը նստի: Լաւ մտածիր այս վտանգի մասին և մէկն ու մէկը ընտրիր. կամ առաջւայ պէս եղբօրդ հաւատարիմ մնա, սիրիւր նրան, և ծաղր ու ծանակ եղիր ամբողջ Ա-

րեաց աղդի առջև, կամ գլխիդ բարիքը հասկացիր, և մի հնար գտիր այդ խայտառակութիւնից ազատելու:

Ճշմարիտ է՝ Աժդահակը չէր սպանում Տիգրանուհուն որ եթէ իր կամքով չը վարւի, սպանել է տալու նրան, բայց իմաստուն աղջիկը իսկոյն հասկացաւ նրա խորամանկ խօսքերի մէջ ծածկւած միտքը: Նա միամիտ ձեացաւ: Սիրոյ բառերով հաւատացրեց Աժդահակին իբր թէ ինքն էլ այդ լուրից վրդովւած և անհանգստացած է և իբր թէ միջոցներ է մտածում եղբօր ու Չարուհու թակարդից ազատելու. իսկ մինչ այդ՝ գաղտնի՝ մտերիմ մարդկանց ձեռքով ամենը յայտնեց եղբօրը թէ Աժդահակի նենգութիւնը և թէ նրա դաւաճանութիւնը:

Եւ անա Աժդահակը պատգամաւորներ է ուղարկում Հայոց թագաւորի մօտ և ասում.

— Շտապիր, եկ ինձ տեսութեան մեր տէրութիւնների սահմանագլխի մօտ. շատ կարևոր ասելիք ու գործ ունեմքեզ հետ, որի մասին ոչ գրով կարելի է գրել, ոչ էլ մարդու բերանով ապսպրել, այլ միայն կարելի է երես առ երես առանձին խօսել:

Տիգրանն իմանում էր՝ ի՞նչ սև դործի համար էր իրեն հրաւիրում Աժդահակը: Նա աւելորդ համարեց ծածկել իր գայրոյթը, էլ ռւր էր այն սուրբ բարեկամութիւնը, որի անունից առաջ խօսում էր իր հետ Աժդահակը: Տիգրանը նամակով յայտնեց նրան այն ամենը, ինչ որ գիգւել էր իր խոցւած սրտում, և երեսով տաւ նրա խարդախութիւնը: Այնուհետև այլ ևս ի՞նչ խօսքով, ի՞նչ խորամանկութեամբ կարող էր Աժդահակը նրան խաբել-քնացնել: Նրանց մէջ սկսեց բացարձակ թշնամութիւն:

Ժողովեց Երևանդեան Տիգրանը ընտիր գնդեր իր բոլոր հողերից— և կապադովկիացիներից, և վրացիներից, և աղաններից, և Մեծ ու Փոքր Հայքի բնակիչներից,— ու «խաղաց», արշաւեց մարաց աշխարհի կողմերը: Աժդահակին մեծ վտանգ էր սպասում, բայց կոխը մի առ ժամանակ յետաձգւում էր, որովհետև Տիգրանը դեռ տատան-

ւում էր ու շարունակ մտածում էր Տիգրանու հու մասին թէ ինչպէս անի, ի՞նչ ճար գտնի՝ իր քրոջը մարաց պալատից ազատի: Եւ վերջապէս՝ մի հնարով քրոջը Աթդահակի ձեռքից փախցնելով, նա համարձակ, առանց վարանելու առաջ գնաց և կանգնեց Աթդահակի գործերի դիմաց:

Սոսկալի կռիւ սկսեց. քաջերը քաջերին էին պատահել ու ոչ ոք չէր ուզում թիկունքը ցոյց տալ—և փախչել: Շատ ժամեր տեց ճակատամարտը: Տիգրանը տեսաւ Աթդահակին, մօտեցաւ նրան և այնպէս զարկեց նիզակով նրա կրծքի զրահին, որ նիզակը ջրի պէս ծակեց երկաթէ ամուր զգեստը և շամփրեց Աթդահակին, իսկ երբ Տիգրանը նոյն ոյժով ձեռքը ետ քաշեց, թոքերի կէսը դուրս եկաւ: Սարսափահար եղան մարերը, տեսնելով իրենց թագաւորի մահը, էլ չը դիմացան հայերի յարձակման ու ցիրուցան փախան:

Այսպէս ընկաւ վերջացաւ մարաց տէրութիւնը:

Աթդահակի առաջին կինը, Անոյշը, և Աթդահակի ցեղից բազմաթիւ աղջիկներ ու պատանիներ գերի ընկան հայոց ձեռքը: Տիգրանը նրանց բնակեցրեց Մասիսի արևելեան լանջին, այնտեղ, ուր լեռան վրա լայն փլածք է կազմել ահագին երկրաշարժից: Աւելի քան տասը հազար մարդ նրանց հետ գերի ուղարկեցին Հայաստան և բնակեցին Մասիսի ստորոտում երկար տարածութեան վրա, Երասխի երկու ափերին: Այս մարերը պիտի ծառայէին իրենց տիրուհի Անոյշին: Յետոյ Անոյշից ծագեց հզօր իշխանական տուն, Մուրացան նախարարութիւնը, որ երգերի մէջ յաճախ «վիշապազուն», այսինքն՝ վիշապներից ծնւած էր կոչւում, որովհետեւ «Աթդահակ» — նշանակում է օձ կամ վիշապ: Այս տունը սկսեց վերջը խօսել հայերէն և բոլորովին մոռացաւ իր մարաց լեզուն:

Իսկ սիրելի, գեղեցիկ և մեծիմաստ քոյր Տիգրանուն Տիգրանը թագաւորավայել պատուով ու շուքով ուղարկեց իր շինած Տիգրանակերտ բաղաքը և այն կողմերի բոլոր գաւառներին հրամայեց նրան ծառայել:

Աթդահակի ամբողջ աշխարհը անցաւ Տիգրանի բարեկամ պարսից թագաւոր Կիւրոսին, որի հետ նա շատ երկիրներ նւաճեց, անթիւ անհամար ոսկի և արծաթ, պատւական քարեր, թանգագին մանածքներ, գոյնգոյն զգեստներ բերեց լցրեց Հայաստան, թէ կանանց և թէ տղամարդկանց համար: Այս զգեստներով ամենատեղները սքանչելի գեղեցիկ էին երևում. իսկ գեղեցիկները հօ գիւցազունների նման: Եւ մեղր ու կարագով կերակրեց Երևան գետն Տիգրանը մեծ ու պստիկին, ու այնպէս երջանիկ և ապահով էր իրեն զգում նրա օրով հայ ժողովուրդը, որ յետոյ հայերը միշտ երանի էին տալիս նրա թագաւորութեան ժամանակ ապրողներին և ասում էին.

— Երնէկ մենք էլ նրա ժամանակ աշխարհ եկած լինէինք, նրա տեսութեամբ ուրախանայինք և այժմեան վտանգներից ազատ մնայինք:

V Վ Ա Հ Ա Գ Ն

Այն դարերում, երբ ապրում էին Հայկը, Արամը և Տիգրան Երևանգետներ, Հայոց աշխարհի բնակիչները գեռ հեթանոս էին: Նրանք չէին ճանաչում մէկ Աստծուն, այլ պաշտում էին բազմաթիւ աստուածներ: Շրջապատող ամբողջ բնութիւնը նրանց աչքում լի էր զանազան աստուածութիւններով:

Իրենց գլխներից վեր նրանք տեսնում էին տարածւած ընդարձակ երկնակամարը, որը հորիզոնի մէկ ծայրից մինչև միւսը գրկել է գետինը: Նա կանոնաւոր կերպով մէկ լուսաւորւում է, մէկ խաւարում, ճանապարհ է բանում գլորող արևի և լուսնի համար, պսպղում է անհամար աստղերով և թափում է մայր-գետնի վրա անձրևի փրկարար կաթիլներ: Եւ երկինքը հայի աչքում մի կենդանի էակ էր, մի հզօր աստուած:

Երկինքը եօթն տակ ունէր. նրա ստորին շերտը՝ ամպեղէն է, իսկ միւս շերտերը՝ ջրերի անսահման ծով են և վերջանում են երկնային ովկիանոսով: Այնտեղ, վերե-

ւում, անհուն ջրեր են ամբարւած, որոնք բոլորում են կաթնաղբիւրներով: Ամպերն երկնային աստծու կողմերն են. ամեն երեկոյ նրանք իջնում են գետին արածելու, իսկ առաւօտեան՝ ցօղ թողնելով բոյսերի վրա՝ կրկին վերադառնում են երկինք և խմում են այնտեղ կաթնաղբիւրից: Նրանց ծծերիցն են «կաթում» անձրևի «կաթիլները»: Երբ ամպերն երկնքում գորգոռում են, երկնային կողմերն են այդ, որ ձայն են հանում արիւնածովի, ծիրանի ծովի միջից: Այսպէս էր հաւատում և հաւատում է մինչև հիմա էլ շատ տեղ հայ ժողովուրդը:

Բայց երկնքից ոչ պակաս հրաշալի և զարմանալի է երկիրը: Նա է պահում սերմերը իր կրծքի մէջ և մթնում գութագութում, տաքացնում. նա խորը իր սրտի մէջ ծածկում է հսկայական ծառերի արմատները: Իսկ յետոյ, երբ գալիս է գարունը, նա իր կրծքից դուրս է թողնում լոյսաշխարհ անթիւ ծաղիկներ, փռում է ծառերի ճիւղերին բազմաձև տերևներ, պտուղներ է լցնում, սերմեր և հատիկներ է հասցնում, որ վերջը՝ ձմեռայ մօտենալիս նորից թափւեն թագնւեն նրա մայրական գոգում:

Ինչքան բարութիւններ է տալիս երկիրը մարդուն: Հայը պաշտում էր նրան երկնքի հետ որպէս մի աստուած, և մինչև հիմա էլ երգում է՝ «Երկինք-երկիր» վկայ կանչելով:

Հեռաւոր հորիզոնի մօտ իրար համբուրում են երկինքն ու երկիրը: Ամեն լուսադէմին արեւելքում խաւարը կուռում է լոյսի հետ, երկինքն ու երկիրը կարծես ցնցւում չարչարում են, արիւն է թափւում և կարմիր ներկում ամբողջ երկնային անեղծ ծովը: Աւելի ու աւելի է բոցավառւում այն կողմը. կարծես եղեգներ լինեն վառւելիս, կարծես ծուխ լինի բարձրանալիս ուղիղ դէպի վեր և յետոյ իջնելիս, կարծես բոցեր լինեն հեռու վեր ցցւելիս ու նորից հանգչելիս: Յուրերը աւելի ու աւելի սաստկանում են և արդէն երկնքի կէսն են բռնում, ու յանկարծ՝ այդ հրդեհի միջից դուրս է վազում լայնբերս արեգակը, նոր

զարթնած ուրախ պատանու նման: Դեռ կարելի է նրան նայել առանց վախենալու, որ աչքերդ կը ծակծակի: Ինչպէս կարմիր է նրա կլոր դէմքը, ինչպէս խարտեաշ է նա և աչքերը չռած մեզ է ժպտում: Գլխի մազերը վառւում են կրակի պէս, ի կ մօրուքը բոցեղէն է: Նա կայտառ, խաղալով՝ արագ վազում է առաջ և ամենքին կանչում է գործի: Հեթմոս հայր պաշտում էր այդ ծագող արեւին, երկնքի և երկրի և ծիրանի ծովի զաւակին, Վահագն էր կոչում նրան և աղօթելիս նայում էր նրա կողմը, դէպի արեւելք, ուր բացւում է «աղօթարանը»:

Երկնէր երկիր և երկիր,

Երկնէր և ծիրանի ծով.

Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկ եղեգնիկն.

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,

Ընդ եղեգան փող բոց ելանէր.

Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր.

Նա հուր հեր ունէր,

Ապա թէ բոց ունէր մօրուն,

Եւ աչկունք էին արեգակունք:

Այսինքն թէ՛

Երկնում (տանջւում) էր երկինքը, երկնում էր երկիրը,

Երկնում էր և ծիրանի ծովը.

Երկունքը ծովում բռնել էր և կարմրիկ եղեգնիկն.

Եղեգնի փողից ծուխ էր ելնում,

Եղեգնի փողից բոց էր ելնում,

Եւ բոցի մէջ պատանեկիկ էր վազում.

Նա կրակ մազեր ունէր,

Ապա թէ բոց ունէր մօրուքը,

Եւ աչքերն էին մի-մի արեգակ:

Ամեն մարդ՝ արշալոյսին տեղից վեր թռչելիս, զգում է իր մէջ թարմութիւն և ուժ. նրա սրտից փախչում է ամօթալի երկիւղը, որ գիշերւայ խաւարի մէջ աննկատելի բռն է գնում մարդու հոգու մէջ: Այդ ժամանակ թոյլն

էլ իրան զգում է քաջ և անյաղթելի: Ո՞վ է այդ քաջութիւն տւողը: Վահագնը, ասում էին մեր հեթանոս նախնիները, նա, որ ինքն էլ քաջերից քաջն էր, քաջութեան աստուածն էր: Եւ երբ նա չէր երևում երկնակամարի վրա, գիշերով, հայր չէր սիրում պատերազմի դուրս գնալ: Բայց միայն քաջութիւնը չէր, որ տալիս էր Վահագնը: Արեւ ծագելուն պէս ամեն շնչաւոր զարթնում է



Վահագնը յայդ է գողանում Բաբելոնից

քնից. թռչունները դեռ կամացուկ, յետոյ հետզհետէ աւելի ու աւելի բարձրաձայն ծրվում են, ոչխարներն ու կովերը բառանում են, ձին խրխնջում է, — իսկ հովիւն ու հօտաղը գիշերքն են կլկլացնում:

Ամեն արարած կարծես ուզում է շուտով համոզւել՝ չը լինի թէ գիշերով ձայնը կորցրել է. լիակուրծ նա ներս է շնչում ասաւօտեան ջինջ օդը և զւարթ-զւարթ ձայն է

հանում: Վահագն է ամենքի՛, երգեցնողը, նա է երգի աստուածը:

Ահա թէ ինչու հայոց արկրի ամեն ծայրերից բամբռահարները դիմում էին դէպի Աշտիշատ, ուր այժմ Մշոյ «Սուլթան» ս. Կարապետը՝ վանքն է, իսկ այն ժամանակ կանգնած էր Վահագնի սենեակը, կամ Վահեվահեան մենեանը Վահագնի կողքով: Այնտեղ, ինչպէս ս. Կարապետի մասին հիմա ասում են թէ նա է տալիս մեր կոյր աշուղներին երգի շնորհքը, այնպէս և հնում հաւատում էին թէ Վահագն է այդ շնորհքը բաժանում իր ընտրեալներին:

Այսպէս ծագով արեւը ամենքին և քաջ է դարձնում, և ստիպում է երգել: Բայց երբեմն, նոյն իսկ ցերեկով, չենք տեսնում արեւի պայծառ երեսը: Թուխպերը գալիս ծածկում են մեզից նրա դէմքը. այդ սև-սև ամպերը, վիշապներ են, — ասում էին մեր պապերը, — որոնք կամենում են կապել երկնային ջրերը, թոյլ չը տալ՝ թափւեն երկրի վրա, և պաշարում են ամբողջ երկինքը:

Այդտեղ սկսում է վիշապների և Վահագնի մէջ մի սոսկալի կռիւ: Աստծու ձեռին փայլում է կայծակը և հարւածում վիշապներին:

Երբեմն էլ այդ վիշապները բարձրանում են գետնից:

Տեսե՛լ էք «սատանի քամիներ». օձերի պէս նրանք պտտւում են դաշտերում և ճանապարհներին, ոլորւելով և փոշի բարձրացնելով:

Երբեմն, երբ սաստիկ քամիներ են սկսում փչել, այդ պտրտող սիւնը աւելի ու աւելի մեծանում, վեր է ձգւում. այդ միջոցին թուխպերն էլ սկսում են ոլորւել ու պտրտւել ու ձագարի պէս դէպի ցած ձգւել: Եւ ահա փոշու սիւնը միանում է այդ ամպեղէն ձագարի հետ և կազմում է մի մեծ օձ, որի գլուխը երկնքումն է, իսկ պոչը գետնին: Կատաղած ոլորւում է այդ թաթարը, ահագին ծառեր է արմատից պոկոտում, քանդում է տներ, եկեղեցիներ, յափշտակում բարձրացնում է մարդիկ, կենդանիներ և հեռու շարտում: Իսկ երկինքը այդ միջոցին խա-

ւարում, փայլակը փայլում է, կայծակը աւօտում է ամբողջ երկնակամարը, սոսկալի որոտմունքը դղրդացնում է արար-աշխարհը: Այդ Վահագն է վեր բարձրացրել չար վիշապին, նա է նրան քաշել, քաշել ներքեից, ու ահա իր կայծակէ թրով ծեծում է նրան, զարնում, ջախջախում, մինչև որ վիշապը յաղթւած՝ վայր է ընկնում, երկնքի ջրերը բացւում են և առատ հոսում են երկրի վրա, հետը բերելով ցեխ դարձած փոշին և աւազը: Սրա համար էլ Վահագնը կոչւում էր Վիշապախաղ:

Վահագնի քաջագործութիւնների մասին հնում շատ բաներ էին պատմում: Օրինակ՝ որ մի օր ձմեռը՝ յարդը (դարմանը) պակասեց երկնային կովերի համար: Այն ժամանակ Վահագնը գնաց ասորոց Բարշամ նահապետի մօտ, որին նոյնպէս ասուած էին համարում ասորիները, յարդ գողացաւ նրանից ու փախաւ երկինք: Բայց շտապով փախչելիս ճանապարհին նա թափթփեց յարդը և մինչև հիմա էլ երկնակամարի վրա երևում է այդ սպիտակ հետքը, որ ձգւում է հարաւից դէպի հիւսիս և կոչւում է Յարդգողի, կամ Դարմանգողի ճանապարհ:

Բայց կային Հայաստանում այնպիսիներ, որոնք պընդում էին իբր թէ Վահագնը ծնւել է ոչ թէ երկնքից, երկրից և ծիրանի ծովից, այլ հողեղէն մարդուց և վերջը միայն քաջագործութիւնների համար ասուածացած է:

Ո՞վ կարող էր լինել այդ քաջի հողեղէն հայրը, եթէ ոչ Երևանդեան Տիգրանը, քաջ նահապետը, որը մի հարւածով երկար նիզակով սպանեց մարաց Աթգահակին, այդ «օձին», «վիշապին»: Ասում էին իբր թէ Տիգրանը ունեցել է երեք որդի, և այդ որդիներից կրտսերն էր Վահագնը, որը թագաւորել է: Վահագնից ծագել է Վահնունիների կամ Վահունիների սրբազան ցեղը, որին պատկանում էր Աշտիշատն իր բնակիչներով և Վահագնի սենեակով: Նրանք քրմապետներ և քրմեր էին այդ տաճարում և իրենց օգտին հաւաքում էին այն նւէրները, որ ուխտաւորները բերում էին Վահագն աստծուն:

VI Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Կ

Տիգրան Երևանդանեանից յետոյ մի քանի թագաւորներ նստեցին Հայաստանում, բայց նրանցից ոչ մէկը նրա պէս փառաւոր գործեր չը կատարեց: Նրանք այնքան թուլացան, որ չը կարողացան պաշտպանել հայրենի աշխարհը օտար աշխարհակալներից, ու երկիրը սկսեց ծառայել հարևան պարսիկներին: Երբ մակեդոնացոց Ալէքսանդր թագաւորը պարսից տէրութիւնը կործանեց և առաւ Միջագետքն ու միւս հարևան երկիրները, ահազին շփոթութիւն ընկաւ Հայոց աշխարհում. ամեն մէկը տեղից վեր էր կենում սիրելու աշխարհին, երկրի կարգ ու կանոնը խառնեց, և ոչ մեծն էր երևում, ոչ էլ փոքրը:


Ահա այդ ժամանակ Կասպից ծովի հարաւ-արեւելեան ափին, լեռնոտ Պարթևաստանում երևաց մի քաջ իշխան՝ Արշակ անունով. նա կարողացաւ ազատել իր երկիրը մակեդոնացոց ձեռքից և յետոյ սկսեց իրեն հնազանդեցնել հարևան ազգերը: Նրանից ծագեցին հզօր թագաւորներ, Արշակունիներ, որոնք ընդարձակեցին իրենց հողերը թէ արևելքից, թէ արևմուտքից և թէ հարաւից: Այդ թագաւորներից մէկը Արշակ Մեծն էր, որ հասաւ մինչև Միջագետք, իւրեց մակեդոնացիներից հարուստ Տիգրոն քաղաքը, առանց դժւարութեան, հեշտութեամբ գրաւեց Հայոց աշխարհը և նստեցրեց այնտեղ իր քաջ և խոհեմ եղբայր Վաղարշակին:

Արշակ Մեծը տաւ իր եղբորը ամբողջ Հայաստանը և հարևան մօտիկ երկիրները, թագ դրաւ նրա գլխին ու ասաւ.

— Գնա, վերցրո՛ւ այնքան, որքան քո միտքն ու քո քաջութիւնը կը կտրեն, որովհետեւ քաջերի սահմանը նրանց զէնքն է, որքան կը կտրի, այնքան կը տիրի*):

*) «Ահա՛մանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունի»:

Երբ Վաղարշակը գալիս էր Հայաստան բազմաթիւ զօրքերով, ոչ ոք չը համարձակէր նրա դէմ դուրս գալ և կռւել: Նրա առաջ դուրս եկաւ Բագարատ մեծ իշխանը իր զօրքով: Նա ոսկի և արծաթ ընծայ մատուցեց քաջ Արշակունուն, զարդարեց նրան մետաքսէ զգեստներով և վահանով (ուսնոցով), պսակեց նրան հին հայկազեան, հայրենի թագով, նստեցրեց նրան ոսկեպատ և ակառակուն (ակններով զարդարւած) գահի վրա և իր աղջիկը



«Սահմանք քաջաց զեկն իւրեանց» .

տաւ նրան կնութեան: Այս Բագարատին Վաղարշակը այնքան պատիւների և բարութեանց համար կոչեց թագաւորի եղբայր և հայր: Դրանից ծագեց Բագրատունի երեւելի նախարարութիւնը:

Վաղարշակը հրամայեց իր թագաւորութեան բոլոր իշխաններին հաւաքել ընտիր քաջերով և ինքը եկաւ նստեց Արմաւիր բլրի մօտ այդ անհամար զօրքը վարժեց-

նելու: Այստեղ նա ստիպւած մնաց շատ օրեր, որովհետեւ հայերը մոռացել էին զինւորական կարգերը:

Այնուհետեւ նա այդ վարժւած զօրքերով յաղթեց այն բոլոր հարեան իշխաններին, որոնք չէին կամենում թողնել որ ինքը հանգիստ հաստատուի Հայաստանում, ու սաստեց վայրենի ազգերը, որոնք նոր էին մտել Հիւսիսային կողմերը, բնակել էին Մեծ Կովկասի ստորոտում, լայն հովտում և խոր-խոր քաղերում, և պարապում էին աւազակութեամբ և մարդասպանութեամբ: Յետոյ նա շինեց մի քանի տեղ ամարանոցներ, որսի տեղեր, տնկեց այգիներ և բուրաստաններ ու վերադարձաւ Արարատեան դաշտը: Այստեղ Վաղարշակը նշանակեց աշխարհի վերակացուններ և ինքը չլիսաւոր իշխաններով գնաց դէպի Մծբին քաղաքը, որ Արշակ Մեծը տւել էր նրան իբրեւ մայրաքաղաք:

Մծբնում Վաղարշակը կամեցաւ իմանալ թէ ովքեր էին տիրում Հայաստանին հին ժամանակներում իրենից առաջ, արդեօք քաջ մարդիկ են եղել նրանք թէ վատ և երկչոտ: Բայց հայերի մէջ ոչ ոք նրան չէր կարող ոչ մի ճշմարիտ բան պատմել անցած ժամանակների մասին. շատ բան էլ պատմւում էր սխալ և աղջատւած: Այն ժամանակ նա ընտրեց մի գիտնական ասորի, Մար Աբաս Կատինային, որը շատ լաւ գիտէր և քաղդէական (բաբելական), և յունական լեզուներն ու գրերը, և ուղարկեց նրան իր եղբոր մօտ մեծամեծ ընծաներով, և այսպէս գրեց իր եղբորը:

«Երկրի և ծովի թագաւոր Արշակին, որ պատկերով աստուածների նման ես, իսկ բախտով բոլոր թագաւորներից բարձր, որի միտքը այնքան լայն է, որքան երկրի վրա փռւած երկինքը, Վաղարշակ կրտսեր եղբորից և նիզակակցից, որ քեզանից է կարգւած հայոց թագաւոր: Ողջութիւն քեզ և ամենայն յաղթութիւն:

«Քեզանից ես պատուէր ստացայ որ հոգ տանեմ քաջութեան և իմաստութեան գործերի մասին, և երբեք

մտքիցս չը հանեցի քո այդ խրատը, այլ ամեն ջանք գործ դրի և արի, ինչքան իմ միտքն ու հասկացողութիւնը կտրոււմ էր: Եւ այժմ՝ կարգի բերելով այս թագաւորութիւնը քո խնամակալութեամբ, մտքումս դրի իմանալ թէ ովքեր են տիրել Հայոց աշխարհին ինձնից առաջ, որտեղից են այս նախարարութիւնները, որ կան այստեղ: Որովհետեւ չի երեւում որ այստեղ որեւէ կարգ եղած լինի, կամ որեւէ մեհեմանների պաշտամունք, յայտնի չէ թէ ով է այստեղի իշխաններից առաջինը և ով է վերջինը, ոչ մի օրէնք չի տեսնուում այստեղ, այլ ամեն ինչ խառն ի խուռն է և վայրենի:

«Ուստի աղաչում եմ քո տէրութեանդ, որ հրամայես բաց անել արքունի դիւանդ այս իմ ուղարկած մարդու առջև, որ դա գտնի քո եղջօր և որդու ցանկացածը և բերի շուտով այստեղ ստոյգ տեղեկութիւններ. ես լաւ գիտեմ որ մեր ուրախութիւնը, որ պիտի զգանք մեր կամքը կատարւած տեսնելուց, քեզ համար էլ ուրախութիւն կը լինի:

«Ողջ եղի՛ր դու, որ բնակւում ես աստուծոների մէջ»:

Ստանալով այս նամակը Մար Աբաս Կատինայի ձեռքով, Արշակ Մեծը ուրախութեամբ հրամայեց բաց անել նրա առջև արքունի դիւանը, որտեղ պահւած էին հին թագաւորների գործերի մասին մատեաններն ու զանազան պաշտօնական գրութիւնները, և շատ զոհ էր որ իր եղբայրը, որին ինքը իր թագաւորութեան կէսն էր յանձնել, այնքան խելօք է և հեռատես: Բոլոր մատեանները մի առ մի քննելով, Մար Աբասը վերջապէս գտաւ յուշարէն մի մատեան, որ դեռ Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով քաղդէացոց (բաբելացոց) լեզւից թարգմանւած էր յուշարէն. այդ գրքի մէջ գրւած էին նախնի նահապետների, թագաւորների և մեծամեծների պատմութիւնները: Գիտնական ասորին այս մեծ գրքից արտագրեց միմիայն այն, ինչ որ վերաբերում էր մեր ազգին, ու բերեց Վաղարշակ թագաւորի մօտ Մծբին քաղաքը: Վաղարշակն այդ գիրքը

իր բոլոր գանձերի մէջ առաջինն էր համարում և պատւիրեց մեծ զգուշութեամբ պահել պալատում. իսկ մի մասն էլ փորագրել տւաւ արձանի վրա. և կանգնեցրեց քաղաքում, որ ամենքը տեսնեն և իմանան թէ ինչ է անցել Հայաստանում իրենից առաջ:

Այս մատեանից Վաղարշակը կարողացաւ վերջապէս ծանօթանալ Հայկի և Արմենակի ժամանակից հաստատւած կարգերի ու կանոնների հետ, և այնուհետեւ ինքն էլ սկսեց կարգաւորել իր թագաւորութիւնը:

Անթիւ իշխաններ կային Հայոց աշխարհում՝ հնուց մնացած: Նա տեղեկացաւ թէ ի՞նչ էին արել հայրենիքի համար սրանց նախնիները և իրենք էլ ի՞նչ արժանաւորութիւններ ունեն, ու ամեն մէկին դրա համեմատ պաշտօն և պատիւ տւաւ թէ արքունի պալատում, թէ զօրքի կազմութեան և թէ երկրի կառավարութեան մէջ: Այդ պաշտօնն ու պատիւը պիտի ժառանգաբար մնար իշխանական ընտանիքի մէջ և անցնէր այդ տան մեծից փոքրին, սերունդէ սերունդ.

Վաղարշակը նախ սկսեց կարգաւորել թագաւորական տունը:

Այն Բագարատին, որը սյնպիսի մեծ պատուով և սիրով էր իրեն առաջին անգամ ընդունել, երբ ինքը նոր էր Հայաստան ոտք կոխում, նա ամենից աւելի պարգևատրեց: Բագարատը իրաւունք ստացաւ մարգարիտներով և ակնեւորով զարդարւած երեքտակէն վարսակալ կրել գլխին՝ արքունիքում և թագաւորական տան մէջ շրջելիս: Պսակադրութեան և հանդէսների ժամանակ նա պիտի գնէր թագաւորի գլխին թագը, իսկ մի ուրիշ իշխան հազցնում էր ձեռնոցները: Ամեն տեղ թագաւորին հետևում էին զինւած թիկնապահներ, որոնք ընտրւած էին քաջ և կտրիճ մարդկանցից, Հայկի որդիներից մէկի սերունդից. նրանց գլխաւորը կոչւում էր «մալխազ» մաղխազ: Երբ թագաւորը մի տեղ էր գնում, նրա առջևից Արծրունիները տանում էին ոսկէ ուրծիւներ՝ երկար ձողերի ծայրերին ամրացած: Որ-

սի ժամանակ ամեն ինչ կարգադրում էր մի առանձին իշխան, որի վարժ որդին յետոյ մեծ անուն հանեց իր անօրինակ հետաձգութեամբ, այդ պատճառով նրա ցեղը կոչւեց Վարաժնունի: Իսկ որսկան բազէներ կրելու և բաց թողնելու իրաւունքը թագաւորը տւաւ Հաւնուններին:

Երբ նախարարները հաւաքուում էին Վաղարշակի մօտ խնջոյքի, ամեն մէկը գիտէր իր տեղը: Մէկը պիտի նստէր աւելի մօտիկ թագաւորին, միւսը աւելի հեռու: Երկրորդ բարձին բազմում էր սեղանի մօտ Մուրացան նախարարը, այսինքն՝ «մարաց տէրը», որը ծագում էր Աթղահակի ցեղից: այդ ցեղը Տիգրան Երևանդեանն էր Հայաստան գաղթեցրել և բնակեցրել Մասիսի ստորոտում, Երասխի ափին: Թաւաւորի պալատում կար մի ցուցակ թէ որ բարձը որ իշխանական տան նախարարին էր տւած: Մի առանձին նախարար հացկերոյթից առաջ շարում է այդ բարձերը սեղանի շուրջը, իսկ մի ուրիշը սպասաւորում էր: Սպանդանոցի գլխաւորն էր Սպանդունի իշխանը. սա հոգս էր քաշում որ թագաւորի ճաշին ամենաընտիր միս մատուցւի: Իսկ համեղ գինիներ պատրաստողը Գնունի իշխանն էր, Վաղարշակը շատ էր զւարճանում այս անւան վրա, որը կարծես նշանակելիս լինէր «գինի ունի»:

Կարգւած էին նոյնպէս ամարանոցներ պահող և ամառը ձիւն բերող և թագաւորի համար զով խմիչքներ պատրաստող առանձին իշխաններ:

Վաղարշակը այնքան էր հաւատում Հայկի ցեղին, որ նրա միջից ընտրեց իր պալատի պահապան զօրքը, որ կոչւում էր «ոստան գունդ»: Այս պահապանները չորս գունդ էին կազմում, իւրաքանչիւրը տասնեակ հազար զինւած կտրիճներով: Միևնոյն Հայկի ցեղից նա ընտրեց իր տան կանանոցի վերակացուններ, որոնք «ներքինի» էին կոչւում: Նրանց գլխաւորը կոչւում էր Հայր-մարդպետ. նա էր տան ամբողջ սարք ու կարգին, պահեստներին, գոմանոցներին վերահասու լինում և շրջելով գաւառից գաւառ՝ թագաւորական եկամուտներին հսկում:

Այսպէս կարգաւորելով իր տունը, Վաղարշակը յետոյ զօրքը կարգի բերեց: Բոլոր ձիաւորների գլուխ և ընդհանուր հրամանատար էր նշանակւած Բագարատ թագադիր իշխանը. սրան ասում էին «սպարապետ»: Իսկ հետևակ զօրքի մէջ առաջին տեղը բռնում էր Մուրացան իշխանը, որը իր ցեղից գուրս էր բերում բազմաթիւ հետևակ կուռղներ: Երկրորդ, երրորդ, չորրորդ և այլ կարգի հրամանատարներ էլ նշանակեց թագաւորը իր զօրքի համար: Իսկ թագաւորութեան չորս կողմը թշնամիների յանկարծակի յարձակումներից պաշտպանելու համար, նա պարտաւորեցրեց սահմանների մօտ ապրող իշխաններին զօրքերը միշտ պատրաստ ունենալ և հսկել սահմաններին: Կազմեաններն ու Սիսակեանները ստացան իրենց հին կողմնակալութեան պաշտօնները, որ գեռ Արամ հահապետն էր նրանց տւել, և պիտի նայէին առաջինը՝ հարաւ-արեւելեան, երկրորդը՝ արեւելեան սահմաններին: Կային կողմնակալներ նաև հիւսիս-արեւելքում, հիւսիս-արեւմուտքում, արեւմուտքում և հարաւում:

Արեւմուտքի պաշտպանութիւնը յանձնւած էր բարձրահասակ, խոժոռակազմ, կռպիտ, տափակաքիթ, խոր աչքեր և ահռելի հայեացք ունեցող՝ Տորք իշխանին, որը իր տղեղ և անճոռնի երեսի համար կոչւում էր Անգեղ: Այս Տորքի ուժի մասին շատ զարմանալի բաներ էին պատմում երգիչները: Նրա մասին ասում էին իբր թէ ձեռքով բռնում էր սարերի կողքից, և այնտեղից, որտեղ ոչ մի ճեղք չէր երևում, ձղում պոկում էր մեծ ու փոքր քարեր, իր եղունգներով կտրատում տախտակների նման, տաշում և նոյնպէս իր եղունգներով արծիւներ և ինչ աւես պատկեր վրան փորագրում: Ասում էին իբր թէ մի օր Պոնտոսի (Սև ծովի) ափին տեսել էր թշնամիների նաւեր և մեն-մենակ յարձակւել նրանց վրա. նաւերը իսկոյն խոյս էին տւել, փախել բաց ծովը, բայց Տորքը ետևից էր ընկել ոտով: Երբ աւելի խոր չէր կարողացել մտնել ջուրը, նա գուրս էր եկել ափը, ահագին ժայռեր պոկել և թշնա-

մինների ետևից նետել: Քարերը ընկան նաւերի մէջտեղ, ու այնպիսի խոր պատուածքներ գոյացան ջրի մէջ քարերի ընկնելուց, որ նաւերից շատերը ընկղմւեցին, խեղդւեցին այդ պատուածքների մէջ, իսկ մնացածներն էլ շատ հեռու ցիր ու ցան եղան բարձրացած ալիքներից: Եւ այլ ևս շատ ուրիշ սրա նման առասպելներ էին պատմում հին երգիչները այս Տորք Անգեղի մասին:

Նկան Վաղարշակի մօտ Վահագնի ցեղից մարդիկ և ինքնակամ խնդրեցին որ իրաւունք տայ սպասաւորեն մեհեաններում: Թագաւորը նրանց մեծապէս պատուեց, նրանց յանձնեց քրմութիւնը և առաջին նախարարական տների շարքը կարգեց: Միևնոյն ժամանակ նա Արմաւիրում շատ մեհեաններ կառուցեց և դրեց այնտեղ արեգակի, լուսնի և իր նախնիների արձանները: Այսպէս նա կարգի բերեց կրօնական գործերը:

Նա նորոգեց Շամիրամի շինած Վան քաղաքը և հիմնեց շատ տեղ բաղամարդ քաղաքներ և գիւղեր, և ամեն մէկ հպատակին իրաւունք տուց իր մօտ ազատ մտնելու գործով: Իրա համար նա առանձին ժամեր նշանակեց, երբ ամեն մէկին ընդունում էր, առանձին ժամեր էլ խորհուրդների, զւարճութիւնների և զբօսանքների համար: Նա ունէր երկու յիշեցնող. մէկը բարին էր յիշեցնում, միւսը վրէժխնդրութիւն: Երբ թագաւորը բարկացած էր լինում և անիրաւ հրամաններ էր արձակում, բարի յիշեցնողը պիտի արգարութիւն և ներողամտութիւն յիշեցնէր: Իսկ երբ թագաւորը մոռանում էր մէկին պատժել չարութեան համար, վրէժխնդրութիւն յիշեցնողը այդ բանը նրա միտն էր ձգում: Նա դատաւորներ նշանակեց արքունի տանը, քաղաքներում և գիւղաքաղաքներում: Նա հրամայեց որ քաղաքացիներին աւելի պատիւ տան քան թէ գիւղացիներին և որ գիւղացիները պատեն քաղաքացիներին, ինչպէս իշխաններին, բայց որ քաղաքացիներն էլ չը գոռոզանան և շատ չը պարծենան գիւղացիների առջև, այլ եղբայրաբար վարւեն նրանց հետ:

Ուրիշ շատ այս տեսակ կարգաւորութիւններ մտցրեց Վաղարշակը Հայոց աշխարհում: Եւ որպէս զի թագաւորի մօտը ուր խռովութիւններ չը ծագեն և վէճ չը սկսւի ազգականների մէջ թէ ով պիտի արքայական գահը բարձրանայ, նա կարգադրեց որ միայն անդրանիկ որդին մնայ թագաւորի մօտ և իրաւունք ունենայ նրա հետ ապրելու միևնոյն գաւառում, մանաւանդ Արարատեան դաշտում, իսկ մնացած որդիներն ու ազգականները պիտի բնակւէին ուրիշ նահանգներում, յատուկ նշանակած կալածանքներում, իբրեւ սովորական, հասարակ իշխաններ:

Շատ տարիներ ապրեց Վաղարշակը, Հայաստանի առաջին Արշակունի թագաւորը: Հայոց աշխարհ մտնելիս, նրա ամեն ինչ խառնիխառն գտաւ, իսկ մեռնելիս թողեց ամբողջ երկիրը խաղաղութեան մէջ, ամեն մէկը գիտէր իր իրաւունքներն ու պարտականութիւնները, յայտնի էր մեծ ու պստիկը, և ամենքը գիտէին՝ ինչն էր օրինաւոր և ինչն ապօրինի:

Ուրիշ հարևան երկիրներում էլ նստած էին զանազան Արշակունի թագաւորներ, բայց Հայոց տէրութիւնը այնքան ուժեղ էր և կարգաւորւած, որ Վաղարշակը երկրորդն էր յիշուում այդ բոլոր թագաւորների մէջ և երկրորդ տեղն էր բռնում պարսից մեծ թագաւորից յետոյ:

VII ԱՐՏԱՇԷՍ Ա. ԱՇԽԱՐՀԱԿԱՆ

Շատ երկիրներում թագաւոր նստեցին Արշակունիները. նրանց մէջ առաջինն էր պարսից արքան, իսկ երկրորդը՝ հայոց: Բայց Վաղարշակ Ա. հայոց թագաւորի թոռը, Արտաշէսը, որ մի հպարտ և պատերազմասէր մարդ էր, չուզեց բաւականանալ երկրորդական գահով և կամեցաւ առաջինը լինել: Նա այնքան ուժեղացաւ, որ աւագութիւնը վերջապէս խեց պարսից թագաւորներից, իր արքունիքը շինեց հէնց Պարսից աշխարհում ու առանձին դրամ կտրելու եց իր պատկերով:

Պարսից թագաւորը ստիպւած էր նրա ձեռքի տակ ծառայել: Հայաստանում նա թագաւոր նստեցրեց իր որդի Տիգրանին, իսկ հիւսիսային կուսակալութիւնը յանձնեց վրացոց Միհրդատ բղեշխին, որին և տւեց կնութեան իր Արտաշատայ աղջիկը: Այսպէս իր ուզածի պէս էր կարգադրում Արտաշէսը թէ հայոց և թէ հարեան ազգերի գործերը:

Բայց նա փափագում էր նոր և նոր երկիրներ նւաճելու: Նա անհամար զօրքեր հաւաքեց արեւելեան և հիւսիսային կողմերից ու այս բազմութեամբ դիմեց դէպի արեւմուտք: Ամեն տեղ, ուր նա իջեւանում էր կամ որտեղից անցնում, նա պատւիրում էր մարդագլուխ մի մի քար ձգել, այդպիսով ահագին բլուրներ էին կուտակւում: Երբ նրա զինւորները գետից ջուր էին խմում, գետը նւագում էր, ինչպէս ձմեռայ ամիսներում, և վերեւից հոսող ջրերը չէին կարողանում պակասը լցնել: Կուրի ժամանակ նրա զօրքերի նետերի խտութիւնից արեգակը ծածկւում խաւարում էր, և պայծառ կէսօրը մութ գիշեր էր դառնում:

Ու այնքան շատ էին նրա զինւորները, որ անկարելի էր լինում նրանց մէկ-մէկ համարել, այլ միայն չափելով էին իմանում նրանց թիւը:

Ահա այսպիսի ահագին բազմութեամբ Արտաշէսը անցաւ արեւմուտք և հեղեղեց ամբողջ Փոքր-Ասիան: Ամեն տեղ, ուր նա գտնում էր պղնձաձոյլ ոսկեզօծ կուռքեր, նա հրամայում էր վերցնել և տանել Հայաստան: Այս կուռքերը դրւեցին Արմաւրում:

Այսպէս նա հասաւ մինչև այն ծովը, որի միւս ափին Յունաստանն էր: Նա անթիւ նաւերով լցրեց ծովը և անցաւ միւս կողմը, որովհետև մտադիր էր ամբողջ արեւմուտքը իրեն ծառայեցնել: Ոչ ոք չէր կարողանում նրա զօրութեան ընդդիմադրել: Հարուստ քաղաքներ, շէն աւաններ նա աւերեց և այստեղից էլ բազմաթիւ կուռքեր ուղարկեց Հայաստան: Նրանք դրւեցին Նփրատի վերնազաւառի նւիրական մեհեաններում: Բայց յայտնի չէ

թէ ինչու—արդեօք թշնամու ոսկուց շլացած թէ՞ թագաւորի գոռոգամտութիւնից զգւած—նրա զօրքերը ոտքի ելան և սկսեցին իրար կոտորել: Արտաշէսը ստիպւած էր փախչել և ճանապարհին սպանեց իր զինւորներից: Մեռնելիս նա յուսախափ բացականչեց.

—Աւաղ փառացս անցաւորի (Աւաղ այս անցաւոր փառքին):

Եւ արտասւեց:

VIII ԵՐԻԱՆԴ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԵՒ ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏԵԱՆ

Շատ թագաւորներ նստեցին Հայաստանում Վաղարշակից յետոյ Արշակունի տնից, և Բագրատունի նախարարները միշտ հաւատարիմ ծառայում էին նրանց: Բագրատունիներն էին մեծացնում և կրթում թագաւորական տղաներին և յետոյ նրանցից մեծին՝ հօր մահից յետոյ դահ նստեցնում և զլխին Արշակունեաց ժառանգական թագը դնում:

Շատ մեծամեծ մարդիկ դուրս եկան այս իշխանական ցեղից և փառաւորւեցին ոչ միայն հայրենի աշխարհում, այլ և Հայաստանից դուրս: Բայց նրանց մէջ ոչ ոք այնպէս անուն չը հանեց, ինչպէս Սմբատը, Բիւրատ Բագրատունու որդին:

Նա բաջ էր և անյաղթելի. ժամանակակիցների մէջ ոչ ոք չունէր նրա նման աջողութիւն պատերազմներում: Քաջութեան համեմատ էր և նրա մարմնի մեծ հասակն ու ամուր կազմածքը: Մինչև խորին ծերութիւն նա ֆառաւարդաւոր և աշխոյժ, և նոյն իսկ ալեւոր մաղերով զարդարւած տարիքում պահպանեց իր երիտասարդական գեղեցկութիւնը. աչքի մէջ ունեցած արիւնի բիծը աւելի էր գեղեցկացնում նրան: Նա՛ չը նայած մարմնի ուժին և ամրութեան, ամեն բանի մէջ զգոյշ էր ու հեռատես և իր առաքինութիւններով ամենքի սիրտն ու ոգին էր շահում:

Սմբատ Բիւրատեանը իր ամբողջ կեանքը զոհեց գահ բարձրացնելու Սանատրուկ թագաւորի որդի՝ մանուկ Արտաշէսին, որը միակ օրինական ժառանգն էր հօրից յետոյ։ Ոչ կաշառքը, ոչ մեծամեծ պատիւներ խոստումը, ոչ էլ փառքը օտար աշխարհում նրան չը գրաւեցին, և նա հաւատարիմ մնաց իր պարտքին։

Սանատրուկին իր ծծով մեծացրել էր Սմբատի հօրաքոյր Սանոտը, որ Արծրունի իշխանին էր մարդու գնացած։ Պատմում են, որ մի ձմեռ օր, երբ երեխայի մայրը՝ Օգան և ծծայր Սանոտը անցնում էին Կորդլաց լեռներով, սաստիկ բուք բարձրացաւ, մըրիկը ցրեց ամենքին և այլ ևս մէկը միւսին չէր կարողանում գտնել։ Սանոտը երեխան գրկած՝ երեք օր երեք գիշեր մնաց ձիւնի տակ, երեխային իր կաթով կերակրելով և մարմնի տաքութեամբ տաքացնելով։ Աստուածները մի ինչ որ հրաշալի կենդանի ուղարկեցին, որ պահում պահպանում էր նրանց։ Շատերը կարծում են որ այդ կենդանին սպիտակ շուն է եղել, որին իրենց հետ էին վերցրել կորածներին որոնող մարդիկ՝ և նա է պատահել ու գտել մանուկին և դայեակին։ Այդ բանից յետոյ երեխան կոչւեց Սանասրուկ, այսինքն՝ Սանոտի տուրք։ Այս Սանատրուկը յետոյ Հայոց թագաւոր դարձաւ։

Իր թագաւորութեան վերջին տարիներում նա շատ վստահութիւն էր ցոյց տալիս մի մարդու, որը մօրով նոյնպէս Արշակունի էր։ Սրա անունն էր Երւանդ։ Նրա մայրը՝ խոշոր մարմնով և խոշոր դէմքով, ինքնակամ մի կին էր, որին իշխաններից ոչ ոք սիրտ չարեց կին առնելու։ Նա այն ժամանակ մի անյայտ մարդ ուզեց և ծնեց երկու մանուկ։ մէկի անունը դրին Երւանդ, միւսինը՝ Երւազ։ Երւանդը մեծանալով դառաւ մի սրտոտ, քաջ և յաղթանդամ տղամարդ և սիրելի եղաւ Սանատրուկին, այնպէս որ Հայոց բոլոր նախարարների մէջ առաջին տեղը բռնեց։

Նա իր խոնարհութեամբ և առատաձեռնութեամբ ամենքին իր կողմն էր քաշում։ Երբ Սանատրուկը մեռաւ, որսի ժամանակ մի նետից՝ յայտնի չէ թէ ինչպէս վիրաւորւե-

լով, — Երւանդը օգուեց շփոթութիւնից և իր կողմնակիցների օգնութեամբ թագաւոր նստեց։ Բայց Բագրատունիները ազգից ոչ ոք չը կամեցաւ նրա գլխին թագ դնել և այդպիսով նրան օրինական թագաւոր ճանաչել։

Թագաւորելուց յետոյ կասկած ընկաւ Երւանդի սըրտում՝ չըլինի թէ Սանատրուկի որդիքն ուղեւան հայրական գահին տիրանալ, և նա կոտորել տւաւ ամենքին։ Միայն մի տղայ, որի անունն էր Արսաւէս, ազատեց այդ կոտորածից։ Ծծմայրը նրան փախցրեց դէպի արևելք և Կապուտան (Ուրմիոյ) լճի մօտերքում թաք կենալով՝ մարդ ուղարկեց նրա «դայեակ», կամ դաստիարակ Սմբատ Բիւրատեանի մօտ եղելութիւնը իմաց տալու։ Սմբատը այդ ժամանակ իր տոհմական կալաձքներում էր, Ճորոխ գետի հովտում, Սպեր գաւառում, Սմբատաւան գիւղում։ Հէնց որ լսեց սարսափելի բօթը, որ Սանատրուկը մեռել է, իսկ նրա որդիք Երւանդի հրամանով կոտորել են, նա իսկոյն իր երկու աղջիկներին՝ Սմբատանոյշին և Սմբատուհուն տարաւ նստեցրեց Բայբերդ և այդտեղ ընտիր պահապաններ դրեց, որ ամրոցը պաշտպանեն։ Իսկ ինքը իր մէկ կնոջ հետ և սակաւաթիւ մարդկանցով շտապով ընկաւ մանուկ Արտաշէսին գտնելու։ Երւանդը իմացաւ նրա գնալը և ետևից մարդիկ ուղարկեց որ բռնեն։ Այդ պատճառով Սմբատը գտնելով Արտաշէսին, ստիպւած էր երկար ժամանակ ծածուկ, զգեստները փոխած, լեռներում ու դաշտերում օտով թափառել, իջևանել մանուկի հետ մար հովիւների վրաններում և իջևաններում, մինչև որ յարմար ժամանակ գտաւ և փախաւ պարսից թագաւորի մօտ։ Սմբատի քաջութեան համբաւը վաղուց արդէն հասել էր պարսից արքայի ականջը, և նա մեծ պատիւներ տւաւ հայ նախարարին իր զօրավարների հետ հաւասար, իսկ Արտաշէսին, որը Արշակունի էր, ուրեմն իր հեռաւոր ազգական, կրթեց իր որդիների հետ։

Երւանդը շատ էր մտածում այն բանի մասին, թէ ինչպիսի պատուհաս է պահւում իր համար պարսից ար-

քունիքում, և անհանգստութիւնից չէր կարողանում քնել: Նոյնիսկ եթէ քնում էլ էր, միշտ սարսափելի երազներ էր տեսնում: Եւ ահա նա դեսպաններ է ուղարկում պարսից թագաւորի մօտ և այսպէս ասում.

—Արիւն և հարազատ իմ. ինչո՞ւ ես իմ և իմ թագաւորութեան դէմ քո տանը մեծացնում մար Արտաշէսին, ի՞նչու ես ակա՞նջ դնում աւագակ Սմբատի խօսքերին, ի՞նչու ես լսում նրան և հաւատում իբր թէ դա Սանատրուկի որդի է, Արշակունի և քեզ արիւնակից ու հարազատ: Նա Սանատրուկի որդի չէ, այլ Սմբատը խաբում է, մար հովիւների մի ինչ որ տղային աշխատում է Արշակունի շինել, և սուտ-սուտ բաներ է հնարում:

Նոյնպէս և շատ անգամ ուղարկում է Երւանդը Սրմբատի մօտ և ասում.

—Ի՞նչու ես դու այդքան աշխատում: Ծծմայրը քեզ խաբել է. ի՞նչու ես իմ դէմ մի մար տղայ մեծացնում:

Բայց պարսից թագաւորը ոչինչ չի պատասխանում, իսկ Սմբատը այնպիսի անախորժ, ծանր ու կծու խօսքերով է ետ դարձնում իրեն մօտ եկողներին, որ Երւանդը սաստիկ զայրանում է և վրէժը հանում է նրա աղջիկներից: Նա զօրք է ուղարկում Սպեր գաւառը, պաշարում է Բայբերդ ամրոցը, կոտորում է Սմբատի թողած քաջ պահապաններին, գերի է վերցնում Սմբատանոյշին և Սմբատունուն և տանում փակում է նրանց Անի ամրոցում (Եփրատի ափին), թէև քաշում է անպատիւ վարելու նրանց հետ:

Քանի որ մանուկ Արտաշէսը ապրում էր Պարսից արքունիքում, Երւանդը միշտ երկիւղի մէջ էր, որ մի օր նա մեծանալով կը խլի իրենից հայրական գահը: Այս վտանգից ազատելու համար, նա հայոց Միջագետքը տաւ հռոմայեցիներին և սկսեց նրանց մեծ հարկ վճարել:

Երւանդը վախենում էր նախարարներից, վախենում

էր և ժողովրդից: Ուստի մտածեց շինել իր համար մի ամուր քաղաք, մանաւանդ որ Երասխը հեռացել էր Արմաւրի տակից և ձմեռայ ցրտերին, հիւսիսային սառը քամիներից քաղաքում բոլոր աղբիւրները սառչում էին ու բնակիչները ոչ մի տեղից չէին կարողանում բաւականաչափ ջուր գտնել: Թագաւորը մի քարաբլուր ընտրեց հին քաղաքից մի փոքր հեռու դէպի արեւմուտք, Երասխի ափին, այնտեղ, որտեղ դիմացի կողմից թափւում է Ախուրեանը, պատեց այդ բլուրը ամուր պարիսպներով և այստեղ տեղափոխեց իր արքունիքը թագաւորական բոլոր գանձերով և զարդերով: Քաղաքի ներսը նա փորել տաւ խոր-խոր ջրհորներ, որոնց յատակը գետի յատակին հաւասար էր: Երասխի ջուրը գետնի միջից ծծւելով և զրոււնելով՝ հաւաքւում էր այդ ջրհորներում: Իսկ միջնաբերդը նա ամրացրեց բարձր պարիսպով և պարսպի մէջ պղնձե դռներ շինեց, իսկ ներքեից վերև բարձրանալու համար՝ երկաթէ սանդուխտներ: Այդ սանդուխտների մէջ ծածուկ որոգայթներ կային, որ ոչ մի դաւադիր չը կարողանայ ծածուկ մտնել միջնաբերդը, որտեղ ապրում էր թագաւորը: Այդ սանդուխտները երկու տակ էին. մէկը ցերեկայ՝ սպասաւորների և բոլոր ցերեկով մտնող երնողների համար, իսկ միւսը գէշերւայ՝ դաւադիրների համար, որոնք ընկնում էին որոգայթի մէջ ու բռնւում:

Այս ամուր քաղաքը Երւանդը իր անունով կոչեց Երւանդաւառ:

Բայց նա չուզեց տեղափոխել այստեղ Արմաւրի կուռքերը, որովհետև վախենում էր՝ չը լինի թէ շատ ժողովուրդ հաւաքւի իր նոր քաղաքը զոհաբերութիւնների համար և ինքը անկարող լինի զգուշութեամբ պահել իր պալատը: Երւանդաւառից մօտ 40 ասպարէզ հեռու դէպի հիւսիս նա մի փոքր քաղաք շինեց Ախուրեան գետի վրա և այնտեղ տեղափոխեց բոլոր բազինները. այդ պատճառով քաղաքը կոչւեց Բագարան: Այստեղ նա շինեց մեհեաններ ու քրմապետ նշանակեց իր եղբայր Երւագին:

Գետի հիւսիսային ափին նա մեծ անտառ տնկել տւաւ ու պատով շրջապատեց: Ներսը նա լցրեց վայրի այծեամներով, եղնիկներով, եղջերուներով, վայրի էջերով և վարազներով, որոնք այստեղ բազմանում շատանում էին: Այս անտառը ասեց Յծնողը անսառ: Այստեղ երւանդը իր սիրտը ուրախացնում էր որսերով:

Բայց բոլոր շինութիւնների մէջ ամենագեղեցիկը և չքնաղը Եււանդակեռն էր: Այս դաստակերտը նա շինեց երասխից գէպի հիւսիս, լայն հովտի մէջ: Մէջտեղ նա շինեց պայծառ շինութիւններ, որոնք արևի լուսով փայլում էին աչքի բբի պէս, և լցրեց այս շինութիւնները բնակիչներով: Բնակութեան շուրջը տարածւում էին ծաղկոցներ և բուրաստաններ, ինչպէս բբի շուրջն է աչքի բոլորակը: Յետոյ գալիս էին բազմաթիւ այգիներ, նման կոպերի խիտ և սիրուն գծերի. իսկ հիւսիսային կողմից ձգւում էր կամարած և բարձրութիւն, գեղեցիկ կոյսի բարձր յօնքի պէս: Հարաւից տարածւում էին հարթ դաշտեր՝ պարզ ու գեղեցիկ ծնօտի պէս, իսկ գետի երկու ափերը նմանում էին երկու շրթունքներին: Այս հրաշալի աչքը կարծես անթարթ հայեացքը յառել էր թագաւորանիստ բարձրագիւր երւանդաշատին ու սքանչացած մնացել էր:

Ճշմարիտ որ թագաւորաւայել մի դաստակերտ էր:

Չուր հօ չէին ասում թէ երւանդը կախարդ է:

Ասում էին իբր թէ նրա չար աչքի նայածքին ոչ ոք չէր գիմանում: Սպասաւորները սովորութիւն ունէին, որ ամեն առաւօտ լուսանալուն պէս պինդ քարեր էին բռնում երւանդի առջև, և նրա չար նայածքից քարերը ձաքում էին:

Բայց ոչ իր ճարտար շինութիւններով, ոչ էլ իր հմայութիւններով երւանդը չը կարողացաւ գրաւել նախարարների և ժողովրդի սէրը: Եւ նրա սրտի մէջ դող ընկաւ, երբ լսեց որ Սմբատ Բիւրատեանը բերում է Արտաշէսին Սանատրուկի գահի վրա բազմեցնելու:

Երբ Արտաշէսը մեծացաւ և նրա գայեակ Սմբատը

մեծ անուն հանեց Պարթևաց աշխարհում իր քաջագործութիւններով, պարսիկ նախարարները խնդրեցին իրենց թագաւորին, որ պարգևատրի նրան և տայ, ինչ որ նա կը խնդրի:

— Իմացէք, ինչ է կամենում այդ քաջ մարդը, — պատասխանեց թագաւորը:

Եւ նրանք ասացին.

— Քո անմահ բարերարութիւն, Սմբատը ուրիշ ոչինչ չի ուզում, բայց թէ Սանատրուկի ողբի Արտաշէսին, թագաւորութիւնից զրկւած քո արիւն և հարազատին վերագարծնես հայրական գահը:

Արքայից արքան համաձայնեց և տւաւ Սմբատին իր զօրքի մի մասը, որ տանի նստեցնի Արտաշէսին Սանատրուկի գահի վրա:

Սմբատը շտապով առաջ գնաց: Երւանդը Ուտիացոց երկրումն էր, երբ իմացաւ որ Սմբատը գալիս է պարսից զօրքերով: Նա թողեց այնտեղ իր նախարարներից շատերին այդ սահմանները պահելու, իսկ ինքը շտապեց իր մայրաքաղաքը և հաւաքեց զօրքեր հայերից, վրացիներից և հարևան ազգերից, որին աղաչանքով, որին պարզենեւով: Գարնան օրեր էին. սրա համար շուտ ժողովեցին բոլոր զօրքերը: Եկել էր նաև Արգամ Մուրացան իշխանը, որին երւանդը վերագարծել էր երկրորդական գահը, որ դրանից առաջ հայ թագաւորները խել էին Աթգահակի ցեղից: Սա բերել էր իր հետ բազմաթիւ հետևակ զինւորներ: Ոչ միայն սրան, այլ և բոլոր նախարարներին և զօրքերին երւանդը առատ-առատ պարգևներ էր բաժանում:

Երբ Սմբատը Արտաշէսի հետ հասաւ Ուտիացոց սահմաններին, այն կողմի զօրքերը անցան նրա կողմը. զօրքերին հետեցին և նախարարները: Այս լուրը շփոթութիւն ձգեց երւանդի կողմնակիցների մէջ: Նրանք էլ սկսեցին մտածել երւանդից բաժանւել, մանաւանդ որ տեսնում էին որ հռոմէական օգնական զօրքերը չեն գալիս: Իսկ երւանդը մէկին միւսին բախշում էր գանձեր և պա-

տիւններ, բայց սրանով միայն աւելի տեսիլ էր դառնում: Բոլորն էլ լաւ գիտէին, որ նա պարգևներ է տալիս ոչ թէ առատաձեռն լինելով, այլ Սմբատի երկիւղից, և շատ ստացողները նրան այնքան չէին սիրում, որքան ատում էին նրան քիչ ստացողները:

Գեղամայ ծովի ափով Սմբատը եկաւ Արագած սարի ետևը: Նա չէր վախենում Երևանդի զօրքերի բազմութիւնից, նա երկիւղ էր կրում միայն Մուրացան Արգամ իշխանից, որ մի քաջ տղամարդ էր և բազմաթիւ տիգաւորներ (կարճ նիզակներով զինւած մարդիկ) ունէր:

Արտաշէսը ծածուկ պատգամաւորներ ուղարկեց Արգամ նախարարին և երդեց, որ կը թողնի նրան այն ամեն պատիւները, որ ստացել էր Երևանդից, նոյն իսկ աւելի կը բարձրացնի, միայն թէ նա թողնի Երևանդին և հեռանայ:

Երեք հարիւր ասպարէզ Երևանդաշատից հեռու դէպի հիւսիս, Ախուրեան գետի ափին, Արտաշէսն ու Երևանդը իրար պատահեցին: Սմբատը հնչեցրեց պղնձէ փողերը և առաջ ընկաւ, վրա պրծաւ Երևանդի զօրքերին, սրպէս մի զայրացած արծիւ կաքաւների խմբին: Արգամը իր բազմաթիւ հետևակներով մի կողմ քաշւեց: Երևանդի աջ և ձախ թևերից հայ նախարարներն էլ անցան Արտաշէսի կողմը և խառնեցին նրա մարդկանց հետ: Վրացիք չը դիմացան ու փախան: Միջագետքի զօրքերը սարսափելի ջարդ կրեցին. միայն Տաւրոսի քաջերը դեռ պաշտպանւում էին. նրանք երգւել էին և խոստացել Երևանդին իրենց կեանքը չը խնայել և Արտաշէսին սպանել: Նրանք թշնամիների շարքերը ճղելով՝ միշտ դէպի առաջ էին գնում, դէպի Արտաշէսի կանգնած տեղը, երբ մէջ ընկաւ Արտաշէսի ծծօր որդին՝ Գիսակը՝ հետևակ. նա նրանց առաջը կտրեց, սպանեց նրանց, բայց կռիւ մէջ թշնամու սրից նրա դէմքի կէսը վայր բերւեց, և նա մեռաւ, բայց փրկեց իր կաթնեղբորը:

Այն ժամանակ Երևանդի ամբողջ զօրքը սկսեց փախչել, իսկ Երևանդը ձի հեծած շտապեց իր մայրաքաղաքը:

Նա ձին փոխում է ամեն իջևանում, որ կարգել էր իր բանակից մինչև իր քաղաքը: Բայց Սմբատը՝ չը նայելով գիշերւայ ժամին, հալածում էր նրան սակաւաթիւ կտրիճներով մինչև Երևանդաշատի դուռը:

Մարաց զօրքերը այդ գիշեր ֆուսկին Երևանդի զօրքի տեղում և բանակեցին դիակների վրա, իսկ Արտաշէսը իջաւ Երևանդի՝ կաշով և կտաւով պատած վրանում և այդտեղ. անցկացրեց գիշերը: Եւ երբ լուսացաւ, Արտաշէսը չուգեց անարգել Երևանդին պաշտպանող քաջերին և ազնուութեամբ, իշխանաբար հրամայեց նրանց դիակներն էլ թաղել իր ընկած զինուորների հետ, որպէս զի վայրենի գազաններն ու թռչունները չը զգգեն նրանց: Այն հովիտը, որտեղ նա բանակեց դիակների վրա, նա կոչեց Մարաց մարգ, իսկ կռիւ տեղը՝ Երևանդաւան, այսինքն մի տեղ, որտեղից ինքը վանել, փախցրել է Երևանդին:

Այս այսպէս անելով՝ Արտաշէսը գնաց դէպի Երևանդի քաղաքը: Կէսօրից առաջ էր որ նա հասաւ դաստակերտին: Նա հրամայեց իր զօրքերին գոչել «Մար ամադ», այսինքն՝ «Մարն եկաւ», յիշեցնելով այն վիրաւորական խօսքը, որ Երևանդը ուղարկում էր պարսից թագաւորին և Սմբատին, նրան մար հովւի որդի կոչելով: Այնուհետև դաստակերտը սկսեց Մարմէս կոչւել, որովհետև Արտաշէսը կամենում էր որ Երևանդի անունը վերցւի այդ տեղի վրայից:

Մինչև Արտաշէսի գալը Սմբատը իր փոքրաթիւ զնդով պահում էր քաղաքի դուռը: Երբ ամբողջ զօրքը հասաւ և յարձակում գործեց ամրոցի վրա, ամրոցի մարդիկ անձնատուր եղան և դուռը բաց արին: Զինուորներից մէկը վազելով մտաւ պալատը, վաղորով (թրով) զարկեց Երևանդի գլխին և նրա ուղեղը ցրւեց տան յատակի վրա: Այսպէս վախճանեց Երևանդը, Սանատրուկի որդոց կոտորողը: Բայց Արտաշէսը չը թողեց անպատել նրա դիակը. նա յիշում էր որ Երևանդն էլ Արշակունի արիւնից էր, և հրամայեց թաղել նրա դիակը և վրան արձան կանգնեցնել:

Երևանդի մահից յետոյ Սմբատը մտաւ թագաւորական գանձարանը, պտրտեց այնտեղ ու գտաւ Սանատրուկի ծանօթ թագը, բերեց դրեց Արտաշէսի գլխին և թագաւորեցրեց նրան Հայաստանի վրա:

Այդ օրը ամենաերջանիկ օրն էր Սմբատ Բիւրատեանի համար:

IX ԱՐՏԱՇԷՍ Բ. ԵՆ ԱՐՏԱՒԱԶԴ

Արտաշէսը տիրացաւ նորից իր հայրական գահին և չը գիտէր թէ ինչպէս իր երախտագիտութիւնը ցոյց տայ այն



Սմբատը քաղաքում է Արտաշէսին

ամենքին, որոնք իրեն օգնել էին այդ դժուար և վտանգաւոր գործի մէջ: Նա մեծ-մեծ պարգևներ տաւ պարսից զօրքին, որոնք քանի-քանի անգամ իրենց արիւնը թափել էին նրա համար, և սրտանց շնորհակալութիւն յայտնելով նրանց՝ ճանապարհ ձգեց իրենց հայրենիքը: Մուրացան

իշխան՝ քաջ և պատուական Արգամին նա ոչ միայն, ինչպէս խոստացել էր, կրկին երկրորդական զահր տաւ, այլ և նւիրեց յակնթակապ պսակ, գինդեր (օղեր) երկուականը-ներին և կարմիր կօշիկ մի ոտին. Արգամը ստացաւ իրաւունքը թագաւորի սեղանին ոսկի գդալով և պատառաքաղով ուտելու և ոսկեղէն գաւաթով խմելու:

Չը մոռացաւ մանուկ թագաւորը և իր անձնէր դայեակ Սմբատին. նա նոյն պատիւները տաւ նրան, ինչ որ տւել էր Արգամին, բացի երկու ականջի գնդերից և կարմիր կօշիկներից, բայց դրա փոխարէն կարգեց նրան բոլոր նախարարներից բարձր: Արտաշէսը ոչ միայն հին, հայրենական թագակապ ասպետութիւնն և արեւմտեան զօրքի իշխանութիւնը յանձնեց Սմբատին, այլ և հրամանատար նշանակեց նրան բոլոր զործակալների և կարգադրիչ ամբողջ արքունի տան: Արտաշէս թագաւորը վշտացած էր որ մեռել էր իր ստընտուի որդին՝ Գիսակը: Այն ժամանակ նա բարձրացրեց նրա որդի Ներսէսին: Նա նախարարական պատիւ տաւ Ներսէսին ու նրա սերնդին և կոչեց այս նոր նախարարական ազգը Դիմաքսեան, այսինքն՝ «Դէմք-կէսեան»-ի յիշատակ Գիսակի, որը իր կաթնեղբայր Արտաշէսին պաշտպանելիս՝ կուէր մէջ թշնամու սրից կորցրել էր դէմքի կէսը:

Ամենքից շատ Արտաշէսը պարտական էր պարսից թագաւորին, որ հարազատ հօր պէս իրեն պատսպարել և ամենազլխաւոր օգնականն էր եղել: Նա հրամայեց Սմբատին գնալ ամուր Բագարանը, սպանել այնտեղ քրմապետ Երևադին և բերել նրա գանձերը: Սմբատը անցաւ դէպի հիւսիս, բռնեց Երևադին, մի ծանր երկանաքար հրամայեց կապել նրա վզից ու ձգել նրան Ախուրեան գետի ոլորտների մէջ, իսկ նրա տեղ քրմապետ կարգեց Արտաշէսի մերձաւորներից մէկին, որ մի ժամանակ մի ինչ որ երազահան մոգի աշակերտ էր եղած և այդ պատճառով Մոգպաշտէ, այսինքն՝ «Մոգ պաշտող» էր կոչուում: Երևադի հինգ հարիւր ծառաները և բոլոր գանձերը, նոյնպէս և մեհենանե-

րի ամենաընտիր ակնեղէնն ու ոսկեղէնը Սմբատը աւար առաւ ու բերեց Արտաշէսի մօտ: Այս հարստութիւններից թագաւորը Սմբատին նւիրեց հինգ հարիւր ծառաները, իսկ բերած գանձերի վրա աւելացրեց նաեւ իր գանձարանից բազմաթիւ թանգազին իրեր և յանձնեց Սմբատին, որ տանի իր կողմից ընծայ իր հայր և օգնական պարսից թագաւորին:

Սմբատ Բիւրատեանը դիմեց Երևանդաշատից դէպի Պարսկաստան.

Նա անցաւ Մասիս լեռան միւս կողմը և այնտեղ, Արածանի գետի ափին, ակունքից ոչ հեռու, Նպատ լեռան ստորոտում հիմնեց մի աւան և այդ աւանում բնակեցրեց իրեն ընծայած՝ Երևադի ծառաներին. այդ պատճառով այդ աւանն էլ նրանց հին բնակավայրի անունով կոչւեց Բազարան: Այնուհետև Սմբատը շտապեց իբրև ընծայատար պարսից թագաւորի մօտ, հանգիստ լինելով որ իր բացակայութեան միջոցին ոչ մի թշնամի չի յարձակւի Հայաստանի վրա: Բայց այդպէս չեղաւ. հէնց այդ ժամանակ եկան հոռմէական կայսեր հարկահանները և ահազին զօրքով կանգնեցին հայոց սահմանների մօտ: Նրանք պահանջեցին Արտաշէսից Երևանդի վճարած տարեկան հարկը և սպառնում էին ներս խուժել Հայաստան, տակն ու վրա անել, քանզի ամբողջ աշխարհը: Իսկ սպարապետ Սմբատը հեռու էր: Արտաշէսը լաւ համարեց աղաչել հոռմայեցիներին ետ կենալ իրենց մտադրութիւնից, հարկը իսկոյն ուղարկեց նրանց և այդպիսով հաշտութիւն արաւ նրանց հետ:

Արտաշէսը չուզեց բնակւել Երևանդի շինած քաղաքում և գնաց այնտեղ, որտեղ խառնւում են Երասխն ու Մեծամօրը. այդտեղ մի բլուրկար, որ նա շատ հաւանեց, ահա այդ բլրի վրա նա շինեց մի նոր քաղաք, որ իր անունով անւանեց Արսաւա: Երասխը ինքը կարծես նրան օգնում էր, բերելով իր հետ մայրի փայտ, և առանց դժւարութեան ու կարճ ժամանակում շինւեց այդ քաղաքը: Քաղաքի մէջ Արտաշէսը կառուցեց մի մեհեան և հրա-

մայեց ալդտեղ տեղափոխել Բագարանից բոլոր բազիններն ու հայրենի կուռքերը: Այստեղ փոխադրեց նա Երևանդաշատից բոլոր զարդարանքները, թէ այն, որ տարւած էին Արմաւրից, և թէ այն, որ ինքը Երևանդն էր շինել, և ինքն էլ իր կողմից շատ հոյակապ շինութիւններով ճոխացրեց իր արքայանիստը: Եւ եղաւ Արտաշատը ամենագեղեցիկն և ամենահարուստը Հայաստանի քաղաքների մէջ, որովհետև թագաւորը Երևանդաշատից բերեց և բնակեցրեց այստեղ նոյնպէս և այն արհեստաւոր և վաճառական հրէաներին, որոնց Երևանդը Արմաւրից էր տարել իր քաղաքը: Այս հրէաները շատ տարիներ առաջ գերի էին բերւած Պաղեստինէից և բնակեցրած էին Արմաւրում:

Արտաշատը դեռ շինւում էր, երբ յանկարծ Կովկասի լեռնաբնակ ալանները՝ միացնելով իրենց հետ բոլոր լեռնականներին և վրացիներից շատերին, մեծ ամբոխով ասպատակեցին Հայաստան և տարածւեցին մեր երկրում: Արտաշէսը իսկոյն հաւաքեց բազմաթիւ զօրութիւն և գնաց նրանց դէմ: Ալանները չըկարողացան դիմանալ հայ քաջերի յարձակման և ետ քաշւեցին, անցան Կուր գետի միւս ափը և այնտեղ բանակ դրին, իսկ նրանց դիմաց, գետի աջ (հարաւային) ափին Արտաշէսը կանգնեց իր զօրքով:

Հայերի ձեռքն էր ընկել ալանաց արքայի որդին: Ալանաց արքան խաղաղութիւն էր առաջարկում Արտաշէսին, խոստանում էր տալ ինչ որ կը խնդրի, ասում էր թէ երդումով յաւիտենական դաշինք կը հաստատի, որպէս զի երբէք ալանների կտրիճները չասպատակեն և չաւերեն Հայոց աշխարհը: Բայց Արտաշէսը այնքան էր զայրացած, որ ոչ մի պայմանով չէր ուզում բաց թողնել գերեալին և սպառնում էր կամ սպանել տալ պատանու, կամ իբրև ստրուկ պահել նրան իր մօտ և ստիպել բանել ծառաների հետ: Այն ժամանակ պատանու քոյր Սաթենիկը մօտեցաւ գետափին և մի բարձր տեղ կանգնելով՝ զի ձայնով այսպէս կանչեց թարգմանի բերանով Արտաշէսի բանակի կողմը.

— Քեզ եմ ասում, ով այր քաջ Արտաշէս, որ յաղթե-

ցիր ալանաց քաջ ազգին. եկայդ պատանուն ինձ ընծայիր,
ալանների գեղաչեայ արքայադուստրին: Միթէ վայել է
դիւցազներին որ մի դատարկ վոէժինդրութեան համար
կեանքից զրկեն ուրիշ դիւցազուհիների զաւակներին կամ
ստրուկների պէս պահեն ու ծառայեցնեն նրանց և յաւի-
տենական թշնամութիւն զցեն երկու քաջ ազգերի մէջ:

Այս իմաստուն խօսքերը լսելով, Արտաշէսը դուրս
վազեց բանակից և մօտեցաւ գետի ափին: Նա տեսաւ հեռ-
ւից ալանաց աղջկան և հիացած մնաց նրա գեղեցկութիւ-
նից: Վերադառնալով իր վրանը, նա կանչեց իր մօտ իր
դայեակ Սմբատին և յայտնեց նրան իր սրտի ցանկու-
թիւնը:

— Ես ինձ կին պիտի առնեմ այդ գեղեցիկ և իմաստուն
աղջկան. թող պատանին խաղաղութեամբ վերադառնայ իր
հօր մօր, թող յաւիտենական դաշինք և ուխտ հաստատուի
երկու քաջ ազգերի մէջ:

Հաւանեց Սմբատը Արտաշէսի այս մտադրութիւնը և
խնամախօս ուղարկեց ալանաց թագաւորի մօտ:

— Տուր ալանաց տիկին օրիորդ Սաթենիկին Արտաշէ-
սին կնութիւն:

Բայց ալանաց թագաւորը վեր թռաւ տեղից ու բա-
ցականչեց:

Ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և
բիւրս ի բիւրուց ընդ քաջազգոյ կոյս օրիորդիս ալանաց:
(Ո՞րտեղից է տալու քաջ Արտաշէսը հազար հազար-
ներ և բիւր բիւրեր ալանաց քաջազգի կոյս օրիորդի փո-
խարէն):

Այն ժամանակ—

«Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ,
եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
եւ անցեալ որպէս զարծուի սրաթիւ ընդ գետն,
եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկէց ի մէջք օրիորդին ալանաց,
եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,

Արագ հասուցանելով ի բանակն իւր:
(Հեծաւ արի արքան Արտաշէսը գեղեցիկ սև ձին,
եւ հանեց ոսկէօղ կարմրակաշի պարանը,
եւ անցաւ որպէս սքաթիւ արծիւ գետի միջով,
եւ ձգեց ոսկէօղ կարմրակաշի պարանը՝
Փաթաթեց ալանաց օրիորդի փափուկ մէջքին.
եւ շատ ցաւեցրեց փափուկ օրիորդի մէջքը,
Արագ հասցնելով նրան իր բանակը):

Այսպէս փախցրեց Արտաշէսը իր հարսնացւին: Այ-
նուհետև Արտաշէսը շատ ոսկի և կարմիր կաշի ուղարկեց
ալանաց թագաւորին որպէս վարձանք (կամ գլխագին)
նրա աղջկայ համար և Սաթենիկի հայրը ստիպւած համա-
ձայնեց, ու մի այնպիսի հարսանիք արին, որ երկար ժա-
մանակ գուսանները երգում էին:—

«Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն»:
(Ոսկի անձրև էր գալիս Արտաշէսի փեսութեան ժա-
մանակ,

Մարգարիտ էր թափւում Սաթենիկի հարսնութեան
ժամանակ):

Սաթենիկը եղաւ առաջինն և ամենասիրածը Արտա-
շէսի կանանցից և նրա որդիքն էին, որ յետոյ մեծամեծ
գործերի պատճառ եղան: Խաղաղութիւն և սէր հաստատուեց
ալանների և հայերի մէջ: Սաթենիկի ազգականներից
մի քանիսը եկան նրա հետ և բնակւեցին Հայաստանում:
Արտաշէսը նրանց հողեր տուաւ ու նախարարական ազգ
կարգեց, որպէս մեծ թագուհու հարազատներին: Իսկ երբ
Սաթենիկի հօր մահից յետոյ ալանաց աշխարհում խռո-
վութիւններ ընկան և Սաթենիկի եղբօր փոխարէն մի ու-
րիշը բռնի թագաւոր նստեց, իսկ Սաթենիկի եղբօրը հա-
լածեց, Արտաշէսը իր դայեակ անյաղթելի Սմբատ Բիւ-
րատեանին Ալանաց աշխարհը ուղարկեց իր աներոջ որ-
դուն պաշտպանելու համար: Սմբատը հայոց զօրքերով
վճռեց ինքնակոչ թագաւորին և հօր զահի վրա նստեցրեց

Սաթենիկի եղբորը, իսկ նրա հակառակորդները հողերը աւերեց, իրենց էլ գերեց և բերեց Արտաշէսի մօտ: Արտաշէսը նրանց բնակեցրեց Մասիս լեռան հարաւ-արեւելեան կողմում, Շաւարշական գաւառում. այդ օրւանից այդ գաւառի անունը փոխեց Արտաղ, որովհետեւ այդ գերիները բերւած էին Ալանաց աշխարհի Արտաղ գաւառից:

Ուրիշ տեղերից էլ շատ գաղթականութիւններ բերեցին Արտաշէսն ու Սմբատը Հայոց աշխարհ և բազմաթիւ նոր նախարարութիւններ կարգեցին: Ամբողջ երկիրը բազմամարդացաւ, լեռները, հովիտները լցեցին գիւղերով և ագարակներով, և որպէս զի մէկի հողերը չը խառնեւ միւսի հողերի հետ, Արտաշէսը հրամայեց գիւղերի և ագարակների սահմանները ձիւշա որոշել առանձին նշաններով: Տաշեցին քառակուսի քարեր, մէջները պնակաձև փորեցին և գետնի մէջ թաղեցին այդ քարերը, իսկ այդ պնակաձև փոսերի մէջ նստեցրին ուրիշ քառակուսի քարեր, որոնք մի փոքր դուրս էին ցցւած երկրի երեսից: Այսպիսով բոլոր հողերը Արտաշէսը չափել տւաւ:

Նա աւելին արաւ: Մինչև նրա օրերը հայերը չէին պարապում գիտութիւններով և արեւստներով և նոյն իսկ չը գիտէին թէ ինչպէս են բոլորում շաբաթները, ամիսներն ու տարիները, այլ ուրիշ ազգերի հաշիւներով էին կառավարւում: Արտաշէսը սովորեցրեց ջոկել ժամանակի այդ շրջանները: Առաջ հայերն էլ, հիւսիսային վայրերի ժողովուրդների պէս աւագակութեամբ և ասպատակութեամբ էին սիրում պարապել և շատ անգամ նոյն իսկ հում միս էին ուտում: Արտաշէսը տարածեց ձկնորսական գործիքներ, մտցրեց նաւագնացութիւն իր աշխարհի ծովակներում, սովորեցրեց ճանապարհորդել գետերով և այնտեղ, որտեղ գեռ չը գիտէին հող մշակել, սովորեցրեց երկրագործութիւն: Եւ նրա աշխատութեամբ այնքան տարածեցին գիտութիւններն ու արեւստները, որ ասում են նրա օրով Հայոց աշխարհում չէր կարելի գտնել մի թիզ

անմշակ հող, ոչ լեռներում, ոչ էլ դաշտերում, և շէն ու հարուստ դարձաւ երկիրը:

Արտաշէսը բազմաթիւ որդիք ունեցաւ Սաթենիկից. նրանց մէջ աւագագոյնն էր Արտաւազդը: Սա մեծանալով՝ մի քաջ և անձնահաճ մարդ դուրս եկաւ, բայց այնքան հպարտ, չարամիտ և նախանձոտ, որ ոչոք չէր ուզում հաւատալ թէ Արտաշէսի պէս բարեգործ մարդուց կարող էր մի այդպիսի անգութ և սևահոգի գաւակ ծնւել: Երգիչները պատմում էին թէ երբ Սաթենիկը պառկեց և առջնիկը ծնեց, վիշապագունները գողացան մանուկ Արտաւազդին, թագաւորի իսկական որդուն, և նրա փոխանակ մի դե դրին:

Եւ ուղիղ որ դեի պէս շատ չարութիւն արաւ իր կեանքում Արտաւազդը, նա նոյն իսկ ամենամօտիկ մարդկանց փառքին ու պատւին նախանձեց:

Նրա աչքի փուշն էր ծերունի Արգամը, Մուրացան իշխանը, որի երկրորդական բարձի և պատւի վրա նա աչք էր գցել: Նա սկսեց տակէտակ զրգուել նրա դէմ իր միամիտ հօրը, ասելով թէ Արգամը կամենում է ամբողջ երկրի վրա թագաւորել, և այնքան արաւ որ հայրը խլեց Մուրացաններից երկրորդութիւնն ու տւաւ, իրեն՝ Արտաւազդին: Սրանից յետոյ մի օր, երբ Արտաշէսը դնացել էր Արգամի մօտ ճաշի, թագաւորի որդիքը կասկածեցին թէ Արգամը վրէժխնդրութիւնից դաւ է սարքել իրենց հօր դէմ, աղմուկ բարձրացրին, յարձակեցին տանտիրոջ վրա և հէնց հացի ժամանակ քաջքեցին նրան մազերից: Իսկ Արտաշէսը՝ սաստիկ զրգուած՝ վերադարձաւ Արտաշատ և հրամայեց իր որդի Մաթանին մեծ գնդով գնալ աւերել Մուրացանների կալածիւնները: Եւ Մաթանը Մուրացաններից շատերին կոտորեց, պալատները այրեց, գիւղերը ոտի հետ հաւասարեցրեց և իր ձեռքը գցելով Արգամի հարձին, որ մի շատ չքնաղ կին էր, բերեց նւիրեց իր հօրը: Թէև մի երկու տարուց Արտաշէսը հաշտեց Արգամի հետ և

վերադարձրեց նրան կալածները, բայց հաբճին էլ բաց չը թողեց:

Արտաւազդը չը բաւականացաւ այսքան չարութիւններով: Նա ուզեց գրաւել Նախիջևանը և առհասարակ Մուրացանների այն բոլոր բերդերն ու գիւղերը, որ գտնուում էին Արաքսից դէպի հիւսիս, և իր ժառանգական կալածները դարձնել: Այս բանը չը կարողացաւ տանել Արգամի որդին և գէնըը ձեռքին ընդգիմացաւ թագաւորի որդու ձգտումներին, բայց կուլի մէջ Արտաւազդը յաղթեց և կոտորեց բոլոր Մուրացաններին, չը խնայեց նաև ծերունի Արգամին, ու գրաւեց նրանց բոլոր հողերը: Ոչ ոք կենդանի չը մնաց այդ փառաւոր նախարարութիւնից, բացի մի քանի աննշան և կրտսեր մարդկանցից, որոնք միայն նրանով փրկւեցին, որ փախան, ապաւինեցին Արտաշէսի պալատում:

Արգամից յետոյ հերթը եկաւ Սմբատ Բիւրատեան սպարապետին: Նա նոր էր յաղթութեամբ վերադարձել պատերազմից, ապստամբ ազգերից բազմաթիւ գերիներ բերելով: Արտաշէսը ուզում էր նրան արժանաւայել կերպով վարձատրել, բախշեց նրան ամբողջ աւարը և պարգևեց արքունի կալածներից մի մասը: Այս բանի վրա նախանձեց Արտաւազդը, և մի չար միտք յղացաւ նրա մէջ — սպանել իր հօր հաւատարիմ դայեակին, նրան փրկողին, նրան հայրական գահի վրա բազմեցնողին: Երբ նրա այս մտադրութիւնը բացւեց, սաստիկ վշտացաւ Արտաշէսը: Բայց Սմբատը ինքը յօժար կամքով տեղի տաւ, չուզեց մրցել արքայորդու հետ, որը հօր մահից յետոյ պիտի նստէր թագաւոր, թողեց նրան սպարապետութիւնը և առհասարակ հայոց բոլոր զօրքերի հրամանատարութիւնը, որին այնպէս փափագում էր Արտաւազդը, ու իր հետ վերցնելով իրեն նւիրած գերիներին՝ հեռացաւ դէպի հարաւ, Կորդրիք (Տմորիք), Ասորեստանի սահմաններից ոչ հեռու, որովհետև ծերութեան հասակում այդ կողմերից կին էր առել և շատ էր սիրում այդ կնոջը:

Այսպէս կարծես Արտաւազդը իրեն հաւասարը չունէր Հայաստանում: Նրանն էր երկրորդութիւնը, նրանն էր և սպարապետութիւնը: Բայց այդ զրգուեց նրա եղբայրների նախանձը: Նրանց կանայք ամաչեցնում էին ամուսիններին, թէ ինչպէս տմարդօրէն, տղամարդկանց անվայել երկչոտութեամբ թոյլ տւին հօրը ամբողջ իշխանութիւնը տալ Արտաւազդին: Այն ժամանակ եղբայրները ստիպեցին Արտաշէսին իրենց էլ բաժին հանել իշխանութիւնից, պատիւներից և կալածներից, և Արտաշէսը կարգեց Վրոյրին, որ մի իմաստուն և բանաստեղծ մարդ էր, հազարապետ ու նրան յանձնեց արքունի տան բոլոր գործերը, իսկ Մաժանին նշանակեց աստաճանների հայր Արամազդի քրմապետ Անիում: Միևնոյն ժամանակ նա զօրքի իշխանութիւնը չորս մասի բաժանեց. արևելեան զօրքը և արևելեան կողմնապահութիւնը նա թողեց Արտաւազդին, իսկ արևմտեանը յանձնեց Արտաւազդի ամենասիրելի եղբորը՝ Տիրանին, հարաւային կողմնապահ հաստատեց նա Սմբատ Բիւրատեանին, իսկ հիւսիսային՝ Զարեհ որդուն:

Թէև այսպէս զօրքի իշխանութիւնը բաժանւեց նաև արքայորդիների մէջ, բայց եթէ Սմբատը չը լինէր, հազիւ թէ կարողանային նրանք իրենց անփորձ տեղով պաշտպանել և ապահով պահել Հայոց աշխարհը: Սմբատն էր, որ օգնեց Արտաւազդին և Տիրանին, երբ սրտնք գնացել էին ազատելու իրենց եղբայր Զարեհին, որը իր անշնորհութեան պատճառով գերի էր ընկել վրացոց թագաւորի ձեռքը և բանտարկւել էր Կովկասեան լեռներում: Սմբատն էր որ մի փոքր յետոյ Բասենի հովտում օգնեց թագաւորի որդոյ և յաղթութիւն տարաւ հռովմայեցիների դէմ: Որովհետև, երբ արևմտքում, հռովմէական կայսրութեան մէջ, սկսւել էին խռովութիւններ, Արտաշէսը ուզել էր օգտուել այդ հանգամանքից և մերժել էր հարկ վճարելը: Հռովմայեցիք զօրք էին ուղարկել և այդ զօրքը՝ քշելով Տիրանին և նրա արևմտեան գունդը, հասել էր մինչև Բասենի հովիտը: Այստեղ օգնութեան եկան Արտաւազդն ու Զա-

րենք իրենց արեւելեան և հիւսիսային գնդերով: Կաւ է որ Սմբատը ժամանակին հասաւ, եթէ ոչ՝ հայոց զօրքը պարտուելու վրա էր: Նա մէջ ընկնելով, չը նայած իր խոր ծերութեանը՝ երիտասարդի պէս կարգաւորեց զօրքերը, վտանգից ազատեց արքայորդիներին, յաղթեց և հետո հալածեց հռովմայեցիներին Հայաստանի սահմաններէն դուրս:

Այս յաղթութիւնից յետոյ ապստամբւեցին հռովմայեցիներէն նաեւ պաղեստինացիք և եգիպտացիք, մինչև որ մի նոր կայսր նստեց Հռովմուս: Նա նւաճեց եգիպտացիներին և պաղեստինացիներին և եկաւ պարսիկների վրա, որոնք հայերի հետ միացած՝ համարձակել էին ասպատակել հռովմայեցոց երկիրները: Արտաշէսը տեսաւ որ դժուար թէ կարողանայ յաղթել մի այդպիսի հզօր կայսրի, շտապով մեծամեծ ընծաներով իջաւ նրա առաջ, իրեն մեղաւոր ճանաչեց, վճարեց նախորդ տարիների հարկերն էլ և նրանից թողութիւն առնելով՝ վերադարձաւ Հայոց աշխարհը:

Երբ կայսրը վերադարձաւ պարսից պատերազմից, նրա մօտ ծածուկ գնաց Մաթան արքայորդին, Արամազդի քրորմապետը: Նա մատնութիւն արաւ և ամբաստանեց իր եղբայրներին.

—Տէր արքայ,—ասաց նա,—իմացած եղիր, որ եթէ չը հեռացնես Անտաւազդին և Տիրանին և հայոց զօրքի հրամանատար չը նշանակես Զարեհին, առանց դժւարութիւնների, անարգել չես ստանալու հարկերդ մեր երկրից:

Մաթանը ատոււմ էր Արտաւազդին Սմբատի պատճառով, որովհետեւ սա նաեւ իր դայեակն էր եղած, իսկ Տիրանի գէմ թշնամանք ունէր նրա համար, որ կարծում էր թէ նրա ընկնելով՝ իրեն կը յանձնուի արեւմտեան կողմնապահութիւնը և այդպիսով ինքը կը լինի թէ Անիի բրմապետ և թէ արեւմտեան զօրքի հրամանատար:

Բայց կայսրը ականջ չը դրեց նրա խօսքերին և ձեռնունայն արձակեց իր մօտից: Արտաւազդն ու Տիրանը իմացան նրա մատնութիւնը և որսի ժամանակ դարանա-

կալութեամբ սպանեցին նրան: Եղբայրասպանները տարան թաղեցին նրան Սմբատի կալածքում, Արածանիի ակունքի մօտ, Բագնաց աւանում, կամ Բագարանում, որպէս քրորմապետի: Մաթանի գերեզմանի վրա վերջը մի մեհեան կանգնեցւեց և այստեղ էր տօնուում հայոց նոր տարին՝ Նաւասարդը:

Այսպէս Արտաւազդը անգթօրէն թափեց իր հարսգատ եղբօր արիւնը, և եթէ ոտքի չէր կանգնում իր հօր գէմ, պատճառը այն էր, որ գիտէր թէ ինչպիսի անսահման սիրով ժողովուրդն և նախարարները սիրում էին Արտաշէս աշխարհաշէն թագաւորին: Բայց նա չը կարողացաւ իր սիրտը զսպել և վերջը հօր փառքին էլ նախանձեց: Եւ այդ եղաւ այսպէս:

Պաղեստինացիք և ասորիները կրկին ապստամբւեցին Հռոմից. պարսիկներն էլ նորից սկսեցին իրենց թշնամութիւնը: Միայն Արտաշէսը մնաց հաւատարիմ: Հռոմայեցոց կայսրը եկաւ Պաղեստինէ, սաստեց այնտեղի ապստամբներին և մեծ զօրքով ուղևորեց Ասորեստան, իսկ հայոց թագաւորին հրամայեց գնալ պարսիկների վրա:

Եւ ահա երբ Արտաշէսը հասել էր Մարանդ գաւառի Բակուրակերտ աւանը, ծանր կերպով հիւանդացաւ այնտեղ: Մի ոմն Աբեղոյ, մի շողոքօրթ, կեղծաւոր և խաբէբայ նախարար Աբեղեան տոհմից, սկսեց աղաչել թագաւորին որ թոյլ տայ իրեն գնալ Երիզայ աւանը, լուսնի աստլածուհու Անահտի մեհեանը, աղօթել այնտեղ և խընդրել նրանից առողջութիւն և երկար կեանք իր արեւ թագաւորի համար:

—Նա է, Անահիտ մեծ տիկինը, մեր ազգի փառքն ու կեցուցիչը, նա է բարերար ամենայն բնութեան, նրանով է որ ապրում է և կենդանութիւն ունի երկիրն Հայոց:

Եւ Արտաշէսը թողեց Աբեղոյին գնալ Երիզայ աւանը, բայց առաջ քան նա վերադարձաւ, վրա հասաւ մահը: Օտար աշխարհում մեռնելիս, Արտաշէսը կարօտով յիշում էր իր սիրելի հայրենիքը, մտաբերում էր նրա գիւ-

դերից և քաղաքներից արշալոյսին բարձրացող ծուխը և նաւասարդի ուրախ առաւօտը, մտաբերում էր իր աշխոյժ որսերն ու թագաւորական տօնախմբութիւնները, և ասում էր.

Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի,
եւ դառաւօտն նաւասարդի,
Զվագեւն եղանց և զվագեւն եղջերուաց,
Մեք փող հարուար և թմբկի հարկանէար,
Որպէս օրէն է թագաւորաց:
(Ո՞վ կը տայ տեսնեմ ծխանի ծուխը,
եւ նաւասարդի առաւօտը,
եղնիկների վագվագն ու եղջերուների թռչկոտելը:
Մենք փող էինք փչում և թմբուկ էինք ածում:
Ինչպէս թագաւորների սովորութիւնն է):

Սուգ ու շիւան բարձրացաւ մեռնող Արտաշէսի շուրջը: Սիրելի կանայքը, հարձերն ու մտերիմ ծառաները կոծում էին «էլ ինչացո՞ւ է մեր կեանքը, եթէ Արտաշէսը չի ապրելու» և իրենց կոտորում էին նրա անկողնու մօտ:

Ծանր էր Արտաւազդի համար տեսնել այս ամենը, և նա սրտնեղութիւնից բացականչեց.

«Մինչ դու գնացեր և զերկիրս ամենայն ընդ բեզ տարար,

«եւ աւերակացս ռոպէս թագաւորեմ»:

(Ահա դու գնացիր և ամբողջ երկիրը բեզ հեա տարար, եւ աւերակների վրա ռոպէս թագաւորեմ):

Այն ժամանակ հայրը անիծեց նախանձոտ որդուն և ասաւ.

«Եթէ դու յորս հեծցիս

յԱզատ ի վեր ի Մասիս,

զՔեզ կալցին քաջք,


Տարցին յԱզատ ի վեր ի Մասիս,

Անդ կացես և զլոյս մի տեսցես:

(Երբ որսի ելնես Ազատ Մասիսի վրա, քաջքերը (սա-

րերի ոգիները) բռնեն քեզ և տանեն վեր, Ազատ Մասիսի վրա. այնտեղ մնաս և լոյս չը տեսնես):

Արտաշէսի թաղումը շատ հանդիսաւոր էր: Դագաղը ոսկեղէն էր, միջի բարձն ու անկողինը՝ բեհեզից, հագած ունէր ոսկեթել հանդերձներ, զլխին թագը, իսկ ոսկէ զէնքը առաջ դրած: Դագաղի շուրջը գնում էին նրա որդիքն ու բազմաթիւ ազգականները, զինուորական պաշտօնեաներն ու նախարարները իրենց գնդերով և վաշտերով,



Յանկարծ Արտաւազդը անդունդը զօրեց

կարծես կուի դաշտ գնալիս լինէին: Առջևից պղնձէ փողեր էին փչում, իսկ ետևից գալիս էին սևազգեստ ձայնարկու կոյսեր և լալկան կանայք, նրանք մի առ մի յիշում էին Արտաշէսի մեծ գործերը և բարձր ձայնով խմբովին ողբում էին նրա կորուստը: Ամենքից յետոյ գնում էր խուռն ուսմիկ բազմութիւնը: Այսպէս տարան թաղե-

ցին Արտաշէսին, և նրա բայց գերեզմանի մօտ նորից շատերը կամաւոր մահով վերջ դրին իրենց կեանքին և թաղւեցին նրա հետ:

Արտաշէսի մահից յետոյ թագաւորեց Արտաւազդը: Նա քշեց Այրարատից իր բոլոր եղբայրներին, որ նրանցից ոչ ոք չը բնակւի արքայի կալածներում. միայն Տիրանին պահեց իր մօտ, որպէս իր փոխանորդ, որովհետեւ ինքը որդի չունէր: Եւ ահա երբ մի օր, անցնելով Արտաշատի կամըրջից, Մասիսի մօտ նա կինձ և վայրի էշ էր որսում, յանկարծ նա իր ձիով մի անդունդ գլորւեց և անհետացաւ:

Ասում են թէ բաշքերը նրան կալանաւորել և բանտարկել են մի մութ այրի մէջ: Ասում են՝ նրա ձեռներն ու ոտները ամուր շղթայւած են. երկու հաւատարիմ շուն շարունակ կրծոտում են երկաթէ շղթաները, և նա ճիգ է թափում փշրել շղթաները, դուրս նետւել ապառաժների ծոցից ու վերջ տալ ամբողջ աշխարհին: Բայց դարբինների կռանների զարկերից զօրանում են նրա շղթաները և նա չի կարողանում դուրս պրծնել Մասիսի միջից: Մինչև այսօր էլ կիրակնաւոտին դարբինները երեք կամ չորս անգամ զարկում են սալին, որ պնդանան Արտաւազդի շղթաները:

Եւ Աստուած չանի, որ նա ջախջախի իր կապանքները և դուրս պրծնի լոյս աշխարհ:

Յ Ա Ն Ե Ղ Ե Ն

Ձ Ր Հ Ե Ղ Ե Ղ

(Բարեկացոց աւանդութիւն *)

Եփրատի ափին կանգնած էր Սուրիպակ բաղաբը: Հին և պիղծ քաղաք. Աստուածները կամեցան ոչնչացնել նրա բնակիչներին, որ չը բազմանան նրանք, որ ոչ մի

*) Այս աւանդութիւնը պատմում էին և հեթանոս հայերը: Բրիտանացի հայերը Քսիսութրի տեղ ասեցին Նոյ:

կենդանի արարած չը մնայ երկրիս երեսին: Մեծ աստուածները բոլորը միասին հաւաքւած խորհուրդ արին: Բայց անհասանելի իմաստութեան տէրը, էա աստուածը մտքումը դրեց նրանց խորհուրդը յայտնել մարդկանց: Նա եկաւ և յայտարարեց թէ աղքատներին և թէ հարուստներին. «Ով խճիթ, խճիթ եղեգնէ, ով պալատ, պալատ աղիւսէ Լսիր ինձ, խճիթ: Լսիր ինձ, պալատ: Լսիր, ով որդի Ուրարատուտուի, Քսիսութր: Նաւը թող լինի քեզ համար տուն. նաւ շինիր: Թող քո ունեցած չունեցածը, կեանքդ փրկիր: Վերցրո՛ւ քեզ հետ նաւի մէջ կեանքի ամեն տեսակ տեսակ սերմեր: Քո նաւը թող լինի երկար, բայց լայնութիւնն ու խորութիւնը թող միատեսակ լինեն: Եւ իջեցրու՛ նաւդ ծովի վրա»:

Եօթն օր եօթը դիշեր բարեպաշտ Քսիսութրը շինում էր իր նաւը: Նա ուշի ուշով կախեց բոլոր ծակոտիկները. վեց չափ կուպր նա գործածեց, բոլոր ճեղքերը ծեփեց:

Նա բազմաթիւ եգներ մորթեց, ահագին սափորներով անուշահոտ իւղ, մեղր, գինի ծախսեց զոհաբերութեան ժամանակ, երբ նաւը վերջացած էր: Յետոյ նաւը իջեցրեց ջուրը: Եւ ինչքան կարողութիւն ունէր, բոլորը բարձեց նաւի վրա: Ինչքան ոսկի և արծաթ ունէր, բարձեց: Ամբողջ իր ընտանիքը, բոլոր տանեցիկներին, ընտանի կենդանիներին ու վայրի գազաններին նա ներս տարաւ նաւը:

Երբ նշանակւած ժամը լրացաւ, Քսիսութրը նայեց երկրին և սարսափեց: Նա մտաւ նաւը և դուռը ամուր փակեց: Նաւապետին նա յանձնեց այդ ահագին տուն

Եւ ահա ծագեց արշալոյսը, սև սև թուխպեր բարձրացան երկրակամարի վրա, որոտը որոտաց, կործանիչ ոգիները սաւառնեցին սարերի, ձորերի վրայով: Ժանտախտի աստուածը ազատութիւն տւեց հողմերին. հողմերը մինչև երկինքն էին բարձրացնում փոշին, և խաւարն ու լոյսը իրար խառնւում էին: Յետոյ սոսկալի հեղեղներ սկսեցին թափւել: Մարդիկ խելագարի պէս դէս ու դէն էին ընկնում: Եղբայրը չէր տեսնում եղբօրը, ոչ ոք ուրիշի մասին

չէր մտածում: Նոյնիսկ աստուածները երկնքում սարսափահար եղան. նրանք թաք կացան Անու^{*)} աստծու մօտ, ամենավերջին երկնքում և կծկւել պահել էին երկնային վանդակի մօտ.

Աստուածները նստոտած էին վշտահար, դլխակոր, անշարժ. նրանց շրթունքները ամուր սեղմւած էին:

Վեց օր և վեց գիշեր երկրիս երեսին վխտում էին հողմերը, ջրերն և մրրիկը, բայց եօթներորդ օրւայ լուսաբացին փոթորիկը դադարեց, ջրերը խաղաղւեցին և ծովը հանդարտւեց: Քսիսուլթը բաց արաւ պատուհանը և ցեքեկւայ լոյսը ընկաւ նրա երեսին: Նա նայեց իր շուրջը — միայն անծայր ծով էր և մարդոց դիակները լողում էին ջրի երեսին: Նա վշտից չը կարողացաւ ոտքի վրա կանգնել և զրեթէ ուշաթափ պիտի նստէր. երեսը ձեռքերով ծածկեց և սկսեց բարձրաձայն հեկեկալ:

Մէկ օրից յետոյ երեսաց մի կղզի: Նաւը լողում էր դէպի Կորդուաց լեռները. մի սղոցաձուկ առաջը կտրեց և կանգնեցրեց նրան մի լեռան վրա: Լեռը նրան թոյլ չէր տալիս այլ ևս ձօճւել: Այսպէս անցաւ առաջին օրը, և երկրորդը, և երրորդը, յետոյ չորրորդը, հինգերորդը և վեցերորդը: Եօթներորդ օրւայ լուսաբացին նա վերցրեց մի աղաւնի և բաց թողեց: Աղաւնին թռաւ հեռու, պտտւեց մի քանի անգամ, բայց հանգստանալու տեղ չը գտնելով՝ վերադարձաւ: Այն ժամանակ նա վերցրեց մի ծիծեռնակ և բաց թողեց: Ծիծեռնակը թռաւ հեռու, պտտւեց մի քանի անգամ, բայց հանգստանալու տեղ չը գտնելով՝ վերադարձաւ: Այն ժամանակ նա վերցրեց մի ագռաւ և բաց թողեց: Ագռաւը թռաւ հեռու և տեսնելով որ ջուրը պակասել է, սկսեց ուտել դիակների միսը, կռուալով հեռանալ և այլ ևս չը վերադարձաւ:

Այն ժամանակ Քսիսուլթը արձակեց բոլոր կենդանիներին աշխարհի չորս կողմը և ինքը սկսեց զոհ մատուցանել: Լեռան զագաթին նա սեղան կանգնեցրեց, նրա վրա

*) Անու՝ երկնքի աստուած էր, Բէլը՝ երկրի, Իսկ Էա՝ ծովի:

դարսեց սրբազան անօթները ամեն մի շարքում, եօթը-եօթը դրեց. նրանց մէջ կինամոն և զանազան անուշահոտութիւններ: Իմացան աստուածները, անուշ հոտն իմացան: Ծանձերի պէս նրանք վժվժում էին զոհարանի շուրջը: Եւ երբ եկաւ Իշտար (Աստղիկ) աստուածուհին, նա հանեց իր վզից Անու աստծու շինած մանեակը և ծիածանի պէս կապեց երկնքի կամարին:

— Ով աստուածներ, — նա ասաց, — երգւում եմ իմ մանեակով՝ երբէք չը պիտի մոռանամ այս օրերը, միշտ կը յիշեմ այս օրերը: Թող բոլոր աստուածները հաւաքւեն զոհի շուրջը, միայն թող Բէլը չը գայ, որովհետեւ նա էրանմտութեամբ հեղեղ ուղարկողը և իմ մարդկանց կորստի մատնողը:

Երբ այնուհետեւ մօտեցաւ Բէլը և տեսաւ նաւը, որի մէջ փրկւել էր Քսիսուլթը, նա սաստիկ կատաղեց, նրա սիրտը զայրոյթով լցւեց աստուածների դէմ: Թէ ով է փրկւել Քսիսուլթին:

Այն ժամանակ Էան բերանը բաց արաւ և դիմեց պատերազմասէր Բէլին.

— Դու աստուածների հօր զօրավարն ես: Բայց ի՞նչ պէս կարող էր մտքովդ անցնել մի այսպիսի խելառութիւն, ի՞նչպէս կարողացար հեղեղ ուղարկել: Թող մեղաւորը պատիժ կրէր իր մեղքերի համար, թող չարագործը տուժէր իր չարութիւնների համար: Բայց ողորմած լինէիր՝ թող բոլորը չը կորչէին խնայելի՜ր՝ թող բոլորը չը ոչնչանային: Հեղեղի փոխարէն, թող գային առիւծները և քշացնէին մարդկանց թիւը, հեղեղի փոխարէն թող գային վագրերը և քշացնէին մարդկանց թիւը. հեղեղի փոխարէն թող սովը գար և անմարդացներ երկիրը, թող ժանդախտը գար և աւերէր նրան: Բայց թող ջրհեղեղը չը լինէր:

Այն ժամանակ Բէլը ուշքի եկաւ: Նա առաւ Քսիսուլթի ձեռքից, մտաւ նաւը, և հետը ներս տարաւ նոյնպէս և նրա կնոջը. և այնտեղ երկուսին էլ իր առաջնորդեցրեց: Եւ կանգնեց նրանց մէջ և օրհնեց այսպէս.

— Մինչև այսօր Քսիսուլթը մահկանացու էր, այսու-

հետև նա և իր կիներ կը լինեն աստուածներէս նման: Թող Քսիսութիւնը յաւիտենական ապրի հեռու աշխարհում, գետերի բերանի մօտ:

Նրկար սպասեցին Քսիսութիւն և նրա կնոջը զոհարանի մօտ այն մարդիկ, որոնք ազատուել էին նաւի մէջ ջրհեղեղից, և չը գիտէին թէ ի՞նչու է Քսիսութիւնը ուշանում: Եւ բարձրաձայն կանչում էին նրանց: Եւ ահա մի ձայն լսեց երկնքից, որ նրանց ասում էր. «Իզուր միք որոնիլ Քսիսութիւն և նրա կնոջը. իզուր միք կանչիլ նրանց անունները: Բարեպաշտութեան համար աստուածները նրանց վերացրին, և նրանք ապրում են հիմա մեզ հետ»:

Երբ մարդիկ հարցրին թէ ո՞ր երկրումն են գտնուում իրենք, վերեւից նրանց պատասխանեցին.

— Դուք Հայաստանումն էք: Գնացէ՛ք այստեղից դէպի հարաւ:

Նրանք էլ հնազանդեցին հրամանին, զոհեր մատուցին աստուածներին և զաղթեցին հարաւ, Բաբելոն:

Այսպէս վերջացաւ ջրհեղեղը և մարդիկ նորից բազմացան:

Կորդուաց լեռներում ցոյց էին տալիս այն Արարադ լեռը, որի գագաթին կանգնել էր նաւը: Ասում էին թէ այնտեղ անփնաս մնում էր նաւի մի մասը. բարեպաշտ մարդիկ բարձրանում վերցնում էին նրա փայտից կամ պոկում էին կուպրից մի կտոր, հաւատում էին թէ այդ փայտը կամ կուպրը փրկարար դեղ է և բազմաթիւ հիւանդութիւններից և ցաւերից մարդուն բժշկում է:

Իսկ ո՞րտեղ է ապրում Քսիսութիւնը:


Մինչև այսօր էլ հայ ժողովրդի մէջ ծերերը երկիւղածութեամբ և ակնածութեամբ հայեացք են ուղղում Մասիսի ձիւնապատ գագաթին և ասում.

— Տեսէ՛ք, այն փայլփլուն ձիւների մէջ է ապրում ծերունի Նոյը անմահական կեանքով: Նրբ Մասիսի գագաթին ամպեր են կուտակւում, այդ Նոյն է, որ իր կառքով զբօսնում է այնտեղ, այդ՝ նրա ձիւերի սմբակների տակից սպիտակ փոշին է բարձրանում: Իսկ երբ լեռան գլուխը պսպղում է հազար ու մի կայծերով, այդ Նոյի պալատն է, որ արևի ճառագայթներից շողշողում է իր անթիւ անհամար ակներով:



ՊՈՆՏԱԿԱՆ ԾՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՒ
ԻՐ ԴՐԱՅԻ ԵՐԿԻՐՆԵՐԸ



ՄԻՋԱԳԵՏԻ ՀԱՅՈՑ

ԱՍՈՐԵՍՅԱՆ

ՄԱՐԱՍԱՆ

ԱԼԱՆԱՅ ԱՇԻԱՐՀ

ՈՐՏԵԱՅՈՅ ԱՇԻԱՐՀ

ՄԱՐԱՍԱՆ

ԵՐԱՍԻ ԳԵՏ

ԿԱՐԱՎԱՆԱՆ

ԲԱՍԵՆ

ԱՐՄԱՒԻՐ

ԵՍՏՐԱՄԱԿԵՐՏ

ՀԱՅԵՐ

ԲԱՅԲԵՐԴ

ԶՈՐՐՈՐԶ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

ՏԻԳՐԻՍ

ԿՐԻՍՏԻԱՅ ԵՐԵՆԵՐ

ՀԱՅԵՐ

ՀԵՐ

ԵԴԵՍԻԱ

ՄԾԲԻՆ

ՆԻՆԻ

Суровому и суровому
В плену и в плену.



Հայկական
Հանրապետություն
ՀՀ

ՀՀ Ազգային գրադարան



NL0413927

